

Սույն հաշվետվությունը «ՀՈՒՄԿ» հիմնադրամի փորձագիտական խումբը նախապատրաստել է ԿԾԿ ԾԻԳ պետական հիմնարկի կողմից մշակված «Աշխատանքային պարտավորությունների նկարագրությունը» փաստաթղթի պահանջներից՝ համաձայն 2009թ.-ի հուլիսի 8-ին «Հաշվապահության ուսուցման միջազգային կենտրոն» կրթական հիմնադրամի և «Կրթական ծրագրերի կենտրոնի» միջև կնքված Պայմանագիր N82/09-ի:

Պայմանագրով ամրագրված աշխատանքների 1-ին փուլում մշակվել է հետազոտության մեթոդաբանությունը, որը ներկայացվել է ԿԾԿ ս.թ. օգոստոսի 19-ին: Մասնագիտական քննարկումների արդյունքում լրամշակված մեթոդաբանությունը հիմք է ծառայել աշխատանքների 2-րդ փուլի՝ դաշտային աշխատանքների իրականացման համար, որի նախնական արդյունքները «ՀՈՒՄԿ»-ը զեկուցել է «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային առաջին ծրագրի ամփոփում և երկրորդ ծրագրի մեկնարկ» խորագրով 2009թ.-ի հոկտեմբերի 22-23-ին Երևանում անցկացված համաժողովում:

Ներկայացված հաշվետվությունը ներառում է հետազոտության հիմնական արդյունքների և եզրահանգումների սեղմագիրը, հարցումների ընթացքում ստացված տեղեկատվության վիճակագրական և գործոնային վերլուծությունը, ինչպես նաև համակարգչային ծրագրով մշակված ելքային տվյալների հիման վրա կազմված աղյուսակների, զծապատկերների և դիագրամների ամփոփ հավելվածը:

Հաշվետվությունը պատրաստել են՝

Հասմիկ Սահակյան, ծրագրի ղեկավար

Աստղիկ Միրզախանյան, տ.գ.թ., գլխավոր խորհրդատու

Սուսաննա Կարապետյան, խորհրդատու

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>Էջեր</i>
<i>Ներածություն և մեթոդաբանություն</i>	3
<b>Բաժին 1. ԲՈՒՅ - ավագ դպրոց համապատասխանությունը</b>	<b>11</b>
1.1 Կրթության որակը դպրոցներում՝ առկա վիճակն ու սպասելիքները	11
1.2 Աշակերտների պատրաստվածության մակարդակը	15
1.3 Կրկնուսուցման հիմնախնդիրները	19
1.4 ԲՈՒՅ-ի սպասելիքներն ավագ դպրոցից	23
<b>Բաժին 2. Բարձրագույն կրթության ֆինանսական մատչելիությունը</b>	<b>25</b>
2.1 Կրթության հասանելիության իրավիճակը	25
2.2 Կրթական վարկերի առաջարկի հիմնախնդիրները	29
2.3 Կրթական վարկերի պահանջարկի հիմնախնդիրները	32
<b>Բաժին 3. ԲՈՒՅ-երում ներքին որակի ապահովման համակարգերը</b>	<b>36</b>
3.1 Որակի ապահովման քաղաքականությունը Հայաստանում	36
3.2 Առարկայական ծրագրեր և կրեդիտային համակարգեր	40
3.3 Ուսանողների գնահատում	42
3.4 Դասախոսական կազմի որակի ապահովում	44
3.5 Ուսումնական միջոցներ և աջակցություն ուսանողին	46
3.6 Տեղեկատվական համակարգեր և հրապարակային տեղեկատվություն	48
<b>Ամփոփումներ և եզրակացություններ</b>	<b>52</b>
<b>Հավելվածներ</b>	

## Ներածություն և մեթոդաբանություն

*Հետազոտության անհրաժեշտությունը:* Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականից միացել է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի (European Higher Education Area) ստեղծման Բոլոնիայի Համաձայնագրին, որով պարտավորվել է մինչև 2012-2013 թվականները ներդնել եվրոպական չափորոշիչներին համապատասխանող բարձրագույն՝ բուհական կրթության որակի հավաստման (ապահովման) համակարգ: Վերջինիս ներդրումը ենթադրում է մի շարք նպատակների իրագործում, որոնք են.

- ❖ ընդունել դյուրընթեռնելի և համեմատելի կրթական աստիճանների համակարգ, այդ թվում դիպլոմի միասնական հավելվածի ներդրման միջոցով, եվրոպայի քաղաքացիների աշխատանքի տեղավորման հնարավորությունների ապահովման և եվրոպական բարձրագույն կրթության համակարգի միջազգային մրցունակության բարձրացման նպատակով,
- ❖ ընդունել մի համակարգ, որն էապես հիմնված լինի երկու գլխավոր փուլերի վրա: Երկրորդ փուլը սկսելու համար անհրաժեշտ է հաջողությամբ ավարտել առաջինը, որը տևում է առնվազն երեք տարի: Առաջին փուլից հետո շնորհված աստիճանն իր որակավորման մակարդակով պետք է համապատասխանի եվրոպական աշխատանքի շուկայի պահանջներին: Երկրորդ փուլը պետք է ապահովի մագիստրոսի և կամ դոկտորի աստիճան, ինչպես ընդունված է շատ եվրոպական երկրներում,
- ❖ նպաստել շարժունությանը՝ հաղթահարելով ազատ տեղաշարժման արգելքները, հատուկ ուշադրություն դարձնելով հետևյալ հարցերին. ա/ ուսանողների համար մատչելի դարձնել ուսման և վերապատրաստման, ինչպես նաև հարակից ծառայություններ ստանալու հնարավորությունները, բ/ դասախոսների, հետազոտողների և վարչական աշխատակազմի համար հաշվի առնել եվրոպական տարածաշրջանում ուսուցման, հետազոտական աշխատանքների և վերապատրաստման ժամանակահատվածը՝ չանտեսելով օրենքով սահմանված նրանց իրավունքները,
- ❖ նպաստել եվրոպական համագործակցությանը կրթության որակի հավաստման (ապահովման) ասպարեզում՝ մշակելով կրթության համեմատելիության չափանիշներ և մեթոդներ,
- ❖ նպաստել բարձրագույն կրթության եվրոպական ուղղվածությանը, մասնավորապես, ուսումնական պլանների մշակման, միջհամալսարանական համագործակցության, շարժունության սխեմաների, համատեղ ուսումնական, գիտահետազոտական և վերապատրաստման ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Թվարկված նպատակների իրագործումը ՀՀ բուհական համակարգում դժվար և տևական գործընթաց է: Այս գործընթացին սատարելու նպատակով Համաշխարհային բանկը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համատեղ կիրականացնի

տեխնիկական աջակցության «Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ վարկային ծրագիրը, որը նախատեսված է 5 տարվա համար՝ սկսած 2009 թվականից: Ծրագրով նախատեսված է նաև նշված նպատակների իրագործման ֆինանսական մեխանիզմի, այն է՝ նպատակային կրթական վարկերի համակարգի ներդրում, ինչը թույլ կտա հատկապես կարիքավոր և ուսման ձգտում ունեցող ուսանողներին դուրս չմնալ վճարովի ուսուցման համակարգից:

Մինչև ծրագրի մեկնարկը նախատեսվում է իրականացնել նախնական գնահատողական հետազոտություն (Baseline Survey), որը թույլ կտա արձանագրել ներկա իրավիճակը և հետագայում գնահատել գնահատել ծրագրի միջանկյալ և վերջնական արդյունքները: Հետազոտական առանձին խնդիր է ուսանողական վարկերի համակարգի ներդրման պայմանների և պոտենցիալ պահանջարկի վերաբերյալ շահառու խմբերի կարծիքների պարզաբանումը:

***Հետազոտության նպատակն ու հիմնական խնդիրները:*** Սույն հետազոտությունը, որպես նախնական գնահատողական հետազոտություն, հետապնդում է հետևյալ նպատակը.  
*գնահատել և վերլուծել Հայաստանի Հանրապետության ավագ դպրոցներում և բուհական համակարգում առկա իրավիճակը՝ բարձրագույն կրթության բարեփոխումներից դրանց համապատասխանության տեսանկյունից:*

Նշված նպատակն իրականացնելու համար հետազոտությունը անհրաժեշտաբար պետք է անդրադառնար ստորև թվարկված հիմնական խնդիրների լուծմանը.

- *գնահատել* ԲՈՒՀ-ի պահանջներին ավագ դպրոցի չափորոշիչների և ծրագրերի համապատասխանությունը, մասնավորապես, գնահատել թե՞
  - ինչքանով են ավագ դպրոցի չափորոշիչներն ու ծրագրերը համապատասխանում ԲՈՒՀ-ի պահանջներին,
  - ինչ չափով է ավագ դպրոցն ապահովում ԲՈՒՀ-ի դիմորդների պատրաստվածության որակը,
  - ինչ չափով է ավագ դպրոցը ազդում մասնավոր պարապմունքների թվի /կրկնուսույցների թվի նվազման վրա,
  - ինչպիսի ակնկալիքներ ունեն ԲՈՒՀ-երը ավագ դպրոցի բարեփոխումներից,
- *վերհանել* ավագ դպրոցի սովորողների համար բարձրագույն կրթության ֆինանսական մատչելիության հիմնախնդիրները, մասնավորապես, վերլուծել.
  - կարող է արդյոք նպատակային ուսանողական վարկերի համակարգի ներդրումը օգնել ապահովելու մասնագիտական և բարձրագույն կրթության հասանելիությունը կարիքավոր խավերի համար,
  - ինչպիսին է նպատակային կրթական վարկերի պահանջարկը բուհերի ուսանողների, ինչպես նաև ավագ դպրոցների աշակերտների /նրանց ծնողների շրջանում,

- ինչպիսի առկա և պոտենցիալ միջոցներ կան առևտրային բանկերում՝ կապված նպատակային կրթական վարկերի հետ,
- վերլուծել ԲՈՒՀ-երում ներքին որակի ապահովման (հավաստման) մեխանիզմների ներդրման հետ կապված իրավիճակը՝ ելնելով ներքին որակի ապահովման /հավաստման ստանդարտներից, մասնավորապես, ներկայացնել.
  - որակի ապահովման (հավաստման) քաղաքականությունը և ընթացակարգերը,
  - ծրագրերի և որակավորումների (awards) հաստատումը, վերահսկողությունը և պարբերական վերանայումը,
  - ուսանողների գիտելիքի և հմտությունների գնահատումը,
  - դասախոսական կազմի որակի ապահովումը /հավաստումը,
  - ուսումնական միջոցները և աջակցությունը ուսանողներին,
  - տեղեկատվական համակարգերը,
  - տեղեկատվության հրապարակայնությունը:

**Հետազոտության մեթոդները:** Հետազոտությունը՝ տեխնիկական առաջադրանքին համապատասխան կատարելու և հիմնավորված արդյունքներ ստանալու նպատակով կիրառվել է որակաքանակական մեթոդների համակցված մոտեցումը: Մասնավորապես, հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները հետևյալն են.

1. Ձևայնագված հարցազրույցներ՝ դպրոցների 10-11-րդ դասարանների աշակերտների և ԲՈՒՀ-երի ուսանողների հետ:
2. Ֆոկուսավորված հարցազրույցներ՝ աշակերտների և ուսանողների ծնողների հետ:
3. Ֆոկուս խմբեր՝ ուսուցիչների և դասախոսների հետ:
4. Խորին հարցազրույցներ՝ դպրոցների և ԲՈՒՀ-երի ղեկավար անձանց (տնօրենների, ուսմասվարների, ռեկտորների և պրոռեկտորների) հետ:
5. Փորձագիտական հարցազրույցներ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, կրթության բարեփոխումների հետ առնչվող ազգային կառույցների, կրթության բնագավառում ծրագրեր իրականացնող միջազգային կառույցների, ինչպես նաև կրթական վարկեր տրամադրող առևտրային բանկերի ներկայացուցիչների հետ:
6. Փաստաթղթերի վերլուծություն՝ Բոլոնիայի գործընթացին վերաբերող միջազգային և տեղական նշանակության փաստաթղթերի, հաշվետվությունների, տեղեկանքների, ինչպես նաև ավագ դպրոցի և բարձրագույն կրթության բարեփոխումներին վերաբերող օրենսդրական փաստաթղթերի և փորձագիտական զեկույցների ուսումնասիրություն:
7. Վիճակագրական տվյալների երկրորդային վերլուծություն՝ կրթության ոլորտին վերաբերող պաշտոնական վիճակագրության, վարչական տեղեկատվության, ինչպես նաև միանվագ վիճակագրական հետազոտությունների ամփոփ տվյալների ուսումնասիրություն:

**Հետազոտության գործիքներն ու մեխանիզմները:** Հետազոտության իրականացման գործիքների ու մեխանիզմների ընտրությունը կատարվել է հարցվողներից հավաստի և անաչառ տեղեկատվություն ստանալու նպատակադրումից ելնելով: Որպես հետազոտության հիմնական գործիքներ օգտագործվել են նախապես մշակված հարցաթերթերը (որոնք լրացվել են հարցվողների կողմից) և հարցաշարերը (որոնք լրացվել են հարցազրուցավարների կողմից):

- Հարցաթերթերի միջոցով իրականացվել են ձևայնացված հարցաձրույցներն աշակերտների և ուսանողների շրջանում: Այդ նպատակով կազմվել են երկու առանձին «Հարցաթերթ դպրոցականին» և «Հարցաթերթ ուսանողին»:
- Հարցաշարերի միջոցով իրականացվել են ֆոկլուսավորված, խորին և փորձագիտական հարցազրույցներն ու ֆոկլուս-խմբերը:

Հետազոտության դաշտային աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր հարցման համար նախապես մշակվել են հետազոտության նախապատրաստման և իրականացման ուղեցույց-հրահանգներ, որոնք հիմք են ծառայել հարցազրուցավարների ուսուցման և հրահանգավորման համար:

Հետազոտությամբ ընդգրկված դպրոցներում և ԲՈՒՀ-երում հարցումների համալիրն արդյունավետ իրականացնելու նպատակով մշակվել է նաև հարցումների կազմակերպման սխեման, որում մանրամասն կերպով նկարագրվել է աշակերտների և ուսանողների ձևայնացված հարցազրույցների, դպրոցների և ԲՈՒՀ-երի ղեկավարների խորին հարցազրույցների, ծնողների ֆոկլուսավորված հարցազրույցների, ինչպես նաև ուսուցիչների և դասախոսների ֆոկլուս-խմբերի կազմակերպման և անցկացման անհրաժեշտ քայլերի հաջորդականությունը:

**Հետազոտության ընտրանքը (քանակական բաղադրիչ):** Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից քանակական հետազոտության, այն է՝ աշակերտների և ուսանողների հետ ձևայնացված հարցազրույցներ անցկացնելու համար, կիրառվել է բազմաստիճան ընտրանքի ռազմավարությունը: Մասնավորապես,

- ❖ Դպրոցների ընտրությունը կատարվել է նպատակաուղղված ընտրանքի հիմքով՝ փորձնական ավագ դպրոցների<sup>1</sup> ցանկից և դրանց մոտակայքում տեղակայված միջնակարգ դպրոցներից: Պայմանականորեն նման ընտրանքը հանդիսանում է ստուգողական խմբերի ընտրանք, քանի որ հնարավորություն է տալիս ապահովել հարցման արդյունքների համեմատականությունը: Փորձնական 10 ավագ դպրոցներից ընտրվել են 4-ը՝ յուրաքանչյուր մարզից ընդգկելով մեկական դպրոց: Ընդհանուր ընտրանքը կազմել է 8 դպրոց, որից 4-ը՝ ավագ և 4-ը միջնակարգ: Դպրոցների ցանկը ներկայացված է աղյուսակ 1-ում:

<sup>1</sup> Քանի որ 2008 թվականի սեպտեմբերի 1-ից հանրապետության չորս մարզերում՝ Գեղարքունիքում, Արագածոտնում, Շիրակում և Երևանում ստեղծվել են տաս փորձնական ավագ դպրոց, ապա առաջին քայլով, ավտոմատ կերպով, ընտրվել են ոչ միայն դպրոցները, այլև մարզերը:

**Աղյուսակ 1. Ընտրանքում ընդգրկված դպրոցների ցանկը**

Ավագ դպրոցներ	Մարզ	Միջնակարգ դպրոցներ
1. Երևանի թիվ 112 ավագ դպրոց	<i>ք. Երևան</i>	5. Երևանի թիվ 92 դպրոց
2. Գյումրու թիվ 45 ավագ դպրոց	<i>Շիրակի մարզ</i>	6. Գյումրու թիվ 33 դպրոց
3. Աշտարակի թիվ 5 ավագ դպրոց	<i>Արագածոտնի մարզ</i>	7. Սասունիկի միջնակարգ դպրոց
4. Վարդենիկի կրթահամալիր	<i>Գեղարքունիկի մարզ</i>	8. Արծվանիստի միջնակարգ դպրոց

- ❖ Աշակերտների ընտրանքի ծավալը որոշվել է ընտրված դպրոցներում 10-11-րդ դասարանների աշակերտների թվից ելնելով, որը վերբաշխվել է դպրոցների միջև համամասնության սկզբունքով: Ընդհանուր առմամբ հարցվել է **388 աշակերտ, որից 238-ը, կամ 61.3%-ը՝ ավագ դպրոցի:**
- ❖ ԲՈՒՅ-երի ընտրության հիմնական չափանիշը եղել է ԲՈՒՅ-ի կողմից ներքին որակի հավաստման կանոնակարգերի ներդրման փորձի առկայությունը կամ այդպիսի փորձի բացակայությունը<sup>2</sup>: Ընդհանուր առմամբ ընտրանքում ընդգրկվել է 6 ԲՈՒՅ, որից 3-ում ներդրված են ներքին որակի հավաստման կանոնակարգեր, իսկ 3-ում՝ դեռ ոչ: Ընտրված ԲՈՒՅ-երի ցանկը բերված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Ընտրանքում ընդգրկված ԲՈՒՅ-երի ցանկը**

Ներքին որակի հավաստման կանոնակարգ ներդրած	ԲՈՒՅ-ի բնորոշ հատկանիշը	Ներքին որակի հավաստման կանոնակարգ չներդրած
1. Երևանի պետական համալսարան	<i>համալսարան</i>	4. Գլաձորի համալսարան (մասնավոր)
2. Երևանի բժշկական համալսարան	<i>հատուկ ուղղվածության մարզային</i>	5. Երևանի պետական գյուղատնտեսական ակադեմիա
3. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ		6. Գավառի պետական համալսարան

- ❖ Ուսանողների ընտրանքի ծավալը հաշվարկվել է ընտրված ԲՈՒՅ-երի ուսանողների ընդհանուր թվից ելնելով, որից հետո հաշվարկված թիվը համամասնորեն բաշխվել է հարցման ենթակա ԲՈՒՅ-երի միջև: Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից, ձևավորվել է նաև 2 թիրախային խումբ՝ բակալավրիատի 1-2-րդ կուրսի ուսանողների և մագիստրոսների: Փաստացիորեն, հետազոտվել է **381 ուսանող, որից՝ 138-ը՝ 1-2-րդ կուրսեցիներ և 53-ը՝ մագիստրոսներ:**
- ❖ Ծնողների ընտրանքը կազմվել է պատահական սկզբունքով՝ հարցված աշակերտների և ուսանողների կողմից կամավորության հիմունքներով հարցաթերթի վերջին էջում նշված հարցվածների ծնողների հեռախոսահամարների հիման վրա: Ֆոկուսացված հարցազրույց-հեռախոսազրույցներին կամավոր մասնակցել է ընդամենը **132 ծնող, որից 41-ը՝ ավագ դպրոցի և 52-ը՝ ուսանողի ծնող:**

<sup>2</sup> Հանրապետության 4 բուհեր արդեն իսկ ներդրել են կրթության ներքին որակի հավաստման որոշ կանոնակարգեր՝ Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ: Այդ 4 բուհերն են՝ Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Երևանի բժշկական համալսարանը (ԵԲՀ), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը (ԵՊՃՀ), Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը (ՎՊՄԻ):

**Չետագոտության որակական բաղադրիչը:** Որակաքանակական համակցված մոտեցման կարևորագույն առավելությունը՝ որակական հետազոտության իրականացումն է, որը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում նախապես մշակված հարցաշարերի միջոցով ստանալ ընդգրկուն պատասխաններ կոնկրետ հիմնախնդրի վերաբերյալ: Չետագոտության տեխնիկական առաջանդրանքով նախատեսված է եղել և, փաստորեն, ամբողջ ծավալով կատարվել են հետևյալ հարցազրույցները.

- ❖ **խորին հարցազրույցներ** են անցկացվել ընտրանքում ընդգրկված բոլոր 8 դպրոցների և 6 ԲՈՒՅ-երի ղեկավարների հետ՝ **ընդամենը 14 խորին հարցազրույց**,
- ❖ **ֆոկուս խմբեր** են կազմակերպվել ընտրանքում ընդգրկված բոլոր դպրոցներում և ԲՈՒՅ-երում՝ ուսուցիչների և դասախոսների հետ: Յուրաքանչյուր ֆոկուս խմբի մասնակիցների միջին թիվը եղել է 8-ը մարդ: Ընդամենը իրականացվել է **14 ֆոկուս խումբ, որոնց մասնակցել է ընդհանուր առմամբ 118 մարդ, որից՝ 71 (60%) ուսուցիչ**,
- ❖ **փորձագիտական հարցազրույցներ** են վարվել **20 անձանց հետ**, այդ թվում՝ ՀՀ կրթության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Որակի ապահովման ազգային կենտրոնի, Ակադեմիական փոխճանաչման շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի թվով **7 մասնագետների**, միջազգային կազմակերպությունների, այն է՝ Բաց հասարակության ինստիտուտի, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի և «Տեմպուս» ազգային գրասենյակի կրթական ծրագրերի **3 ղեկավարների**, Հայաստանում Բոլոնիայի սկզբունքների իրագործման հարցերի գծով **5 փորձագետների** և առևտրային բանկերի կրթական վարկերի հետ առնչվող **5 մասնագետների** հետ:

**Չետագոտության փուլերը:** «ԲՈՒՅ-երի առկա վիճակը և կապը ավագ դպրոցի հետ» նախնական գնահատման հետազոտությունն իրականացվել է **2009 թվականի օգոստոս-նոյեմբեր ամիսներին**: Աշխատանքների ամբողջ ծավալը կատարվել է երեք փուլով, որոնք առանձնանում են ոչ միայն ժամանակային առումով, այլև աշխատանքների բովանդակությամբ: Այսպես՝

- **Առաջին փուլը՝ նախապատրաստական (օգոստոս-սեպտեմբեր)**, որի ընթացքում կատարվել է կրթության բարեփոխումների վերաբերյալ օրենսդրական դաշտի, ծրագրային փաստաթղթերի, միջազգային համաձայնագրերի, ՀՀ ԿԳՆ և կրթության բնագավառի կառավարման մասնագիտական կառույցների հաշվետվությունների, տեղական և միջազգային փորձագետների զեկույցների ուսումնասիրում, ինչպես նաև առկա վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն: Այս փուլում նաև մշակվել է հետազոտության մեթոդաբանությունը (քանակական հարցումների ընտրանքը և որակական հարցումների մեթոդները), հետազոտության գործիքները (հարցաթերթեն ու հարցաշարերը, հարցումների ձևաչափերը, հարցազրույցների ուղեցույց-հրահանգները), դաշտային աշխատանքների կազմակերպման մեխանիզմներն ու սխեմա-ժամանակացույցը:



Առաջին փուլի արդյունքներն ամփոփված են «Հետազոտության մեթոդաբանությունը և հիմնական գործիքները» հաշվետվությունում (ընդամենը՝ 67 էջ), որը ներկայացվել է «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկին 2009 թվականի օգոստոսի 19-ին:

- Երկրորդ փուլը՝ դաշտային աշխատանքների իրականացման (սեպտեմբեր-հոկտեմբեր), որի ընթացքում անց են կացվել հետազոտության մեթոդաբանությամբ նախատեսված բոլոր հարցումները: Քանակական հետազոտության հարցաթերթերը տրամաբանական ստուգումից հետո մուտքագրվել և վերլուծության են ենթարկվել համակարգչային Exell ծրագրի կիրառմամբ: Որակական հետազոտության արդյունքներն ամփոփվել են մատրիցաների ձևաչափով, ընդգրկելով հարցաշարերի բոլոր հարցերի ամփոփ պատասխանները: Դաշտային աշխատանքների բովանդակությունն ու կատարման իրական ժամկետները ներկայացված են աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3. Դաշտային աշխատանքների իրականացման ժամանակացույցը*

Աշխատանքի անվանումը	Հարցումների քանակը	2009թ.
Հարցազրուցավարների ընտրություն և հրահանգավորում	-----	15-25 սեպտեմբերի
Փորձագիտական հարցազրույցներ	15 կրթության փորձագետ 5 բանկային փորձագետ	18 սեպտեմբերի – 7 հոկտեմբերի
Ձևայնացված հարցազրույցներ	388 աշակերտ 381 ուսանող	30 սեպտեմբեր – 10 հոկտեմբեր
Խորին հարցազրույցներ	8 դպրոցի տնօրեններ 6 բուհի ռեկտորներ	1-10 հոկտեմբերի
Ֆոկուս խմբեր	8 դպրոցի ուսուցիչների 6 բուհի դասախոսների	1-20 հոկտեմբերի
Ֆոկուսացված հարցազրույցներ	80 աշակերտների ծնողներ 52 ուսանողների ծնողներ	5-15 հոկտեմբերի
Հարցաթերթերի ստուգում, կողմնորոշում, մուտքագրում	-----	5-25 հոկտեմբերի
Տվյալների բազաների ձևավորում, էլքային աղյուսակների ստացում	-----	15-30 հոկտեմբերի

Դաշտային աշխատանքների ընթացքում ստացված տեղեկատվությունը ամփոփվել է ա/ ձևայնացված և ֆոկուսացված հարցազրույցների պատասխանների տվյալների բազաների, բ/ փորձագիտական ու խորին հարցազրույցների և ֆոկուս խմբերի պատասխանների ամփոփ մատրիցաների, գ/ հետազոտության միաչափ և բազմաչափ էլքային աղյուսակների նախապատրաստման տեսքով: Դաշտային աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը՝ ներառյալ համակարգչային Exell ծրագրով ֆորմատավորված հետազոտության տվյալների բազաները, ներկայացվել է «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկին:

Երկրորդ փուլում կատարված դաշտային աշխատանքների արդյունքների հիման վրա ստեղծվել են ձևայնացված և ֆոկուսացված հարցազրույցների 3 տվյալների բազաներ, ֆոկուս խմբերի, խորացված և փորձագիտական հարցազրույցների 5 ամփոփված



## 1.1 Կրթության որակը դպրոցներում՝ առկա վիճակն ու սպասելիքները

Չետազոտության առաջնահերթ խնդիրներից էր բացահայտել դպրոցական կրթության որակի հետ կապված հիմնախնդիրները՝ շեշտադրելով «ավագ դպրոց - ԲՈՒՅ» անցման տեսակետից հնարավորությունների ընդլայնման հարցը: Այս նպատակով հարցման են ենթարկվել.

- դպրոցների 10-11-րդ դասարանների աշակերտները, որոնք հանրակրթական բարեփոխումների արդյունքների անմիջական շահառուներն են,
- բուհերի 1-2 կուրսի ուսանողները, որոնք «հետադարձ հայացքով» կարող են գնահատել իրենց դպրոցական գիտելիքի համապատասխանությունը բուհի պահանջներին,
- աշակերտների և ուսանողների ծնողները:

Չարցունքների արդյունքում ստացված պատկերի վերաբերյալ մասնագիտական պարզաբանում ստանալու, ինչպես նաև քանակական ցուցանիշների որակական հատկանիշները բացահայտելու նպատակով, վերոնշյալ հարցերը քննարկվել են նաև դպրոցի ուսուցիչների, տնօրենների, բուհերի դասախոսների և տնօրինության, ինչպես նաև կրթական ոլորտի մասնագետների ու փորձագետների հետ:

Չետազոտության արդյունքների գծային բաշխվածությունը ներկայացված է կից տրվող հավելվածներում: Ստորև ներկայացվում են այդ հարցումների և քննարկումների հիմնական արդյունքները:

1.1.1 Արդեն ավելի, քան 10 տարի է (սկսած 1998թ.-ից), ինչ ՉՅ կառավարությունը որոշում է կայացրել սկսել կրթության ոլորտի բարեփոխումները՝ առանձնահատուկ հոգածություն ցուցաբերելով միջնակարգ կրթահամակարգին: Վերջինիս բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկը եղավ 2006թ.-ից անցումը 12-ամյա հանրակրթությանը: Նույն գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից ներդրվեց եռամյա ավագ դպրոցը: «Ավագ դպրոցների

համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրում»<sup>4</sup> որպես կարևորագույն նպատակ նշվում է ավագ դպրոցում կրթության որակի և արդյունավետության բարձրագույն ու արդիականացումը:

1.1.2 Վերոնշյալի ենթատեքստում, աշակերտներին ուղղված հարցաթերթում ներառվել է «**Վերջին տարիներին իրականացվող կրթական բարեփոխումների արդյունքում ի՞նչ է փոխվել ձեր դպրոցում**» հարցաշարը՝ 15 առաջարկվող պատասխաններով, ներառյալ բաց պատասխանի հնարավորությունը: Դրական գնահատականների ամենամեծ տեսակարար կշիռը (**70.3%**) ստացել է «Ստեղծվել են նախադրյալներ որակյալ կրթություն ստանալու համար» պատասխանը:

1.1.3 Նույն հարցի վերաբերյալ ավագ և ոչ ավագ դպրոցների աշակերտների պատասխանների համադրումը ցույց է տալիս, որ առաջիններն ավելի հակված են լիովին և փոքր վերապահումներով համաձայնվել առաջարկվող պատասխանի հետ (համապատասխանաբար՝ 50.5% և 46.2%), մինչդեռ միջին և բացասական կարծիք ունեցող ոչ ավագ դպրոցի աշակերտների տեսակարար կշիռն համեմատաբար ավելի մեծ է (համապատասխանաբար՝ 52.4% և 42.8%):

1.1.4 Ավագ դպրոցի աշակերտներն ամենաբարձրը՝ կրթական բարեփոխումների արդյունքների առումով՝ գնահատում են հետևյալ փոփոխությունների առկայությունը.

- «Դասերն ավելի հետաքրքիր են անցնում, կա մտքերն ազատ արտահայտելու և քննարկելու հնարավորություններ» - **50.2%**-ը լիովին համաձայն է, որ այս փոփոխությունը տեսանելի է,
- «Բարձրացել է ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը» - **46.2%**,
- «Դպրոցի ղեկավարությունն ավելի է մտահոգված մեր առաջադիմությամբ» - **42.7%**:

1.1.5 Ոչ ավագ դպրոցի աշակերտների համար առավել տեսանելի են իրենց դպրոցում տեղի ունեցած հետևյալ փոփոխությունները.

- «Խստացել է կարգապահությունը, դասերից բացակայելն անհնար է» - **42.0%**,
- «Դասերն ավելի հետաքրքիր են անցնում, կան մտքերն ազատ արտահայտելու և քննարկելու հնարավորություններ» - **40.7%**,
- «Դպրոցի ղեկավարությունն ավելի է մտահոգված մեր առաջադիմությամբ» - **39.2%**:

1.1.6 Ամենամեծ անհամաձայնությունը ավագ դպրոցի աշակերտների մոտ առաջացել է «Լավացել է դասագրքերի բովանդակությունն ու որակը» պատասխանի հետ կապված. նրանց **48.9%**-ը չի համաձայնվել այս մտքի հետ: Իսկ ոչ ավագ դպրոցի աշակերտների **45.3%**-ը չի համաձայնվել «Դպրոցում կիրառվող գիտելիքների գնահատման 10 բալանի համակարգն ավելի արդարացի է և ընդունելի»

<sup>4</sup> Նշված ծրագիրն արձանագրային որոշմամբ ընդունվել է ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի նիստում:



իրենց իսկ ձևակերպումներով հետևյալն են. դպրոցում խառնաշփոթ է, դասագրքերն ու ծրագրերը խրթին են, որոշ առարկաների գծով՝ անհամապատասխանություն կա, զնահատման համակարգը անհասկանալի է, թռիչքային դասարանների հարցը լուծված չէ:

1.1.11 Ցանկացած բարեփոխումներ, հատկապես այնպիսի լայնածավալ և արժանատի, ինչպիսիք են կրթության բնագավառի բարեփոխումները, ուղեկցվում են որոշակի դժվարություններով: Դրանց նկատմամբ շահառուների հանդուրժողականությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպիսի ակնկալիքներ ու սպասելիքներ ունեն գործընթացում ներգրավված բոլոր կողմերը: Այդ իսկ պատճառով հետազոտության հարցաշարում ներառվել է «Ի՞նչ եք սպասում/ ի՞նչ ակնկալիք ունեք դպրոցական բարեփոխումներից, մասնավորապես ավագ դպրոցների համակարգի ներդրումից» հարցը, որը տրվել է հարցումներում ընդգրկված բոլոր ռեսպոնդենտներին, ինչպես նաև եղել է քննարկման առարկա ֆոկուս խմբերի և խորացված հարցազրույցների ժամանակ:

1.1.12 Հետազոտությանը պարզվել է, որ հատկապես շոշափեյի են ավագ դպրոցի աշակերտների մոտ բարեփոխումներից ակնկալիքները. Երանց ավելի քան 2/3-ը մեծ հույսեր են կապում հոսքային ուսուցման հետ, ակնկալելով, որ ավագ դպրոցում ճիշտ մասնագիտական կողմնորոշում կստանան (69.9%), առարկաները կընտրեն ըստ նախասիրության (78.5%) և դրանց գծով ձեռք կբերեն ավելի խորը գիտելիքներ (74.5%):

1.1.13 Ոչ ավագ դպրոցի աշակերտների սպասելիքները մի փոքր ավելի ցածր են՝ ավագ դպրոցի աշակերտների սպասումների համեմատ: Այսպես, լիովին կամ փոքր վերապահումներով համաձայն են, որ ընտրած առարկաների գծով ավելի խորը գիտելիքներ ձեռք կբերեն հարցվածների 71.4%-ը, որ սեփական նախասիրությանը առարկաներ կընտրեն՝ 61.2%-ը և որ ճիշտ մասնագիտական կողմնորոշում կստանան՝ 57.5%-ը:

1.1.14 Դպրոցների ուսուցիչներն ու տնօրենները կարծում են, որ ավագ դպրոցը կտա սպասվող արդյունքները, եթե դպրոցի ընդունելությունը և ուսուցիչների ընտրությունը լինի մրցույթով, «հոսքից հոսք» տեղափոխվելը լինի ճկուն (սխալ կողմնորոշվածների համար) և առարկայական ծրագրերը հազեցված լինեն թեստերով, վարժություններով, տրամաբանական խնդիրներով:

1.1.15 ԲՈՒՀ-երի դասախոսներն ու տնօրենները սպասում է ավագ դպրոցի կայացմանը, հույս հայտնելով, որ կստանա մասնագիտորեն կողմնորոշված ու պատրաստված

**ՕՆՈՅ՝ ՄԻՆՈՇ ԻՌՈՒՇ**

**ՍՈՒՇԻՆ 2.**  
**ԷԷԻՂ ՆՅՄԻՆՔՆՈՒՄ ԵՄ ԻՆՏՆՈՒՄ**

ՁԵ. ԻնտնոյնՇ ՆՍՍԻՆՇ Օ՞նտնոնԱ ..  
 ԻնՅոնոն ԻնԱնոնՅ ԻնՍՍԻՆՈՒՄ Կն Կն  
 ԱննոնոնՍՍԻՆՇ ԿնՍՍԻՆՈՒՄ Իննոն Զ ՆնՅո  
 ԻնԱնոնՅ անՍԻ ԵնՍՍԻՆՈՒՄՆՈՒՄ Են, ԵնՍՍԻՆՈՒՄ  
 ԻնՍՍԻՆՈՒՄ ՆննոնՍՍԻՆՇ ԵնՍՍԻՆՈՒՄ Կն Կն  
 ՆՅՍՍԻՆՈՒՄ ԵնՍՍԻՆՈՒՄ Են Կն Կն  
 ԵնՍՍԻՆՈՒՄ Կն Կն Կն Կն Կն:

**ՍՈՒՇԻՆ ԵնՍՍԻՆՈՒՄ**  
**Են Կն ՆնՍՍԻՆՈՒՄ Կն**  
 ԵնՍՍԻՆՈՒՄ Կն

ՁԵ. ԻնտնոյնՇ Կն Կն Կն Կն Կն Կն Կն Կն  
 ԿնՍՍԻՆՈՒՄ:

**ԵնՍՍԻՆՈՒՄ ԿնՍՍԻՆՈՒՄ**  
**ԿնՍՍԻՆՈՒՄ ԿնՍՍԻՆՈՒՄ ԿնՍՍԻՆՈՒՄ**  
**ԿնՍՍԻՆՈՒՄ ԿնՍՍԻՆՈՒՄ ԿնՍՍԻՆՈՒՄ**



ունեցող աշակերտների թվում: Միևնույն ժամանակ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՍՈՒՀ) սովորելու մտադրություն ունեցողների **61.5%-ը** ոչ ավագ դպրոցների աշակերտներն են:

1.2.3 Ուսումը շարունակելու մտադրություն ունեցող աշակերտների գերակշռող մեծամասնությունը՝ **84.3%-ը**, ուսման առաջադիմությամբ ինքն իրեն գնահատել է որպես «գերազանցիկ» (**30.1%**) և «հարվածային» (**54.2 %**), իսկ նրանցից բավարար առաջադիմություն ունեցողների **35.4%-ը** մտադիր է սովորել ՄՍՈՒՀ-ում կամ ոչ պետական ԲՈՒՀ-ում: Միևնույն ժամանակ, ուսումը շարունակելու մտադրություն չունեցողների **32.7%-ը**՝ «բավարար» առաջադիմությամբ և **60%-ը** «հարվածային» աշակերտներ են:

1.2.4 Հետազոտության հարցաշարը միտումնավոր կերպով չի պարունակել ուղիղ հարց այն մասին, թե որքանով են աշակերտներն իրենց պատրաստված զգում ԲՈՒՀ կամ ՄՍՈՒՀ ընդունվելու համար: Դա պարզվել է անուղղակիորեն կրկնուսույցների հիմնախնդրին վերաբերող մի շարք հարցադրումներից: Այսպես, հարցվածների կեսից ավելին՝ **51.3%-ը**, միանշանակ գտնում է, որ առանց կրկնուսույցի չի կարող ընդունվել պետական ԲՈՒՀ անվճար հիմունքներով, **30.6%-ը**՝ վստահ է, որ անգամ վճարովի հիմունքներով ցանկացած ԲՈՒՀ ընդունվելն անհնարին է առանց կրկնուսույցի մոտ մասնավոր պարապելու: Հետաքրքրական է, որ վերջերս ԲՈՒՀ<sup>6</sup> ընդունվածների՝ 1-2-րդ կուրսի հարցված ուսանողների **88.8%-ը** պարապել է կրկնուսույցի մոտ, ըստ որում նրանց **93.6%-ը** պարապել է 2-3 և ավելի առարկաներ:

1.2.5 Ընդհանուր առմամբ, ավագ դպրոցների աշակերտների շարքում ավելի մեծ թիվ են կազմում պետական ԲՈՒՀ-ում սովորելու մտադրություն ունեցողները՝ **70%**, մինչդեռ միջնակարգ դպրոցներում այդպիսիք կազմել են հարցվածների **48%-ը**: Այդ մտադրությունն իրականացնելու համար ավագ դպրոցի երեխաներն ավելի նպատակասլաց են՝ դիմելով կրկնուսույցին համապատասխան պատրաստվածությունն ձեռք բերելու ակնկալիքով: Ի դեպ՝ ուսումը շարունակել ցանկացող աշակերտների **83.2%-ը** պարապում է 2-3 և ավելի առարկա:

1.2.6 Այնուամենայնիվ, հուսադրող է այն փաստը, որ պետական ԲՈՒՀ-ում ուսումը շարունակել ցանկացող աշակերտների 50.9%-ից 65.8%-ը (կապված՝ դպրոցների

**ծանՕ»իՄ»իՇ Ի»իՇԱ**

**Ս»իՇի 4.**  
**»ի» Ի»ի»ճճ-Ի»իՄ»ճճճճճճ Ի»ճԱ**

»ի» Ի»ի»ճճճ ՇԱՇՇճճճ չ ի»իՄ»ճճճճճճճճճ ի»ճճճճ ի»ճճճճ ՇՄԵՇՇՇՇՇՇՇ: »ՍՄ Ի»ի»ճճճճ չ ԻՇՇՇՇՇ ի»ի: Ի»ճՇՇՇՇՇՇՇՇ ԷՇՇ չ, ի»ճճ ԷՇՇՇՇՇՇՇՇ ճՇՇՇՇՇՇՇՇ ի»ՍՄ, ճՇ ԷՇՇՇՇՇՇՇՇՇ ՇՇ Ի»ի»ճճՇ Ի»ՍՇՇՇՇՇՇՇ:

**ՍՇՇՇՇ ԷՇՇ-ՇՍՇՇ**  
**ԸՇՍՍՍՍՇՇ ճՇՇՇՇՇ ՇՇՇՇՇՇՇՇ ՇՇՇՇՇՇ**  
**ՆՇՍՇՇՇՇՇՇՇՇ ԷՇՇՇՇՇՇՇՇՇ**

Օ»½ ՍՇՇ ճՇՇ ճՇՇ Ի»ի»ճճ, ճՍՍ ճՇՇՇՇՇՇՇ ՍՇՇՇ ճՍՍՍՍ ի»ի»ճճճճ ՇՇ ի»իՄ»ճճճճճՇՇՇՇՇ:

**ԷՇՇՇՇ ՕՇՇՇՇՇՇՇ**  
**ՇՇ ՆՇՇՇՇՇՇՇՇՇՇՇՇ ՇՇՇ ՇՇՇՇՇՇՇՇՇ**  
**½»ԻՇՇՇ**

<sup>6</sup> Քանի որ հետազոտված 6-ը ԲՈՒՀ-ից միայն մեկն էր մասնավոր, որում հարցված ուսանողների թիվը կազմել էր ամբողջ ընտրանքի 5.5%-ը, կարելի է պնդել, որ հիմնականում պետական ԲՈՒՀ-եր ընդունվողներն են լրացուցիչ պարապել կրկնուսույցի մոտ:













- կրկնուսույցների մոտ չեն գնում այն աշակերտները, որոնց ծնողները չունեն ֆինանսական միջոցներ, պարտք պետք է վերձնեին: Հիմա նրանք կարծում են, որ ավագ դպրոցում առնվազն 10-12 միավոր կվաստակեն և կընդունվեն ԲՈՒՀ,
- կրկնուսույցների մոտ չեն գնում այն աշակերտները, ովքեր ունեն բավարար ընդունակություններ՝ ինքնուրույն պատրաստվելու և դպրոցի տված գիտելիքներով ԲՈՒՀ ընդունվելու համար:

1.3.12 Ընդհանրացնելով հետազոտության արդյունքներն այս հարցի վերաբերյալ, կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ

ավագ դպրոցի համակարգի ներդրումը

կազդի կրկնուսույցների թվի վրա,

մասնավորապես մասնավոր կրկնուսույցների թիվը կնվազի, քանի որ վերջին դասարանը ըստ ուսումնական պլանի արդեն նախատեսված է «կրկնուսուցման» համար, որը կիրականացվի պետության կողմից վարձատրվող դպրոցի ուսուցիչների կողմից:

1.3.13 Միևնույն ժամանակ, ինչպես նշում են փորձագետները,

կրկնուսույցների ինստիտուտը շուկայական հարաբերություններում լինելով ավելի ճկուն, կշարունակի կենսունակ մնալ դեռևս երկար ժամանակ: Միշտ կգտնվեն դիմորդներ, որոնք հավելյալ կրթական ծառայությունների կարիք կունենան:

Խնդիրը պետք է լինի այն, որ կրկնուսուցումը դադարի զանգվածային երևույթ լինելուց: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ ավագ դպրոցը կարողանա ապագուզել հասարակության զոնե անապահով խավին, որ այն ավելի հասանելի և մատչելի ուղի է բուհ ընդունվելու համար:

<p>«ԵՊՈՒՄԻՆԻՍՏԻՆԻ»</p>
<p><b>Արհեստագործական դպրոցի համակարգի ներդրումը</b></p>
<p>Տնօնապետի և Գործադիր տնօրենի ԱՅԻՆՅԱՑՈՒՆ          Արհեստագործական դպրոցի տնօրենի և Գործադիր տնօրենի          Արհեստագործական դպրոցի տնօրենի և Գործադիր տնօրենի</p>
<p>Տնօրենի և Գործադիր տնօրենի և Գործադիր տնօրենի          Արհեստագործական դպրոցի տնօրենի և Գործադիր տնօրենի</p>
<p>Տնօրենի և Գործադիր տնօրենի և Գործադիր տնօրենի          Արհեստագործական դպրոցի տնօրենի և Գործադիր տնօրենի</p>
<p>Տնօրենի և Գործադիր տնօրենի և Գործադիր տնօրենի          Արհեստագործական դպրոցի տնօրենի և Գործադիր տնօրենի</p>
<p>Տնօրենի և Գործադիր տնօրենի և Գործադիր տնօրենի          Արհեստագործական դպրոցի տնօրենի և Գործադիր տնօրենի</p>

## 1.4 ԲՈՒՅ-ի սպասելիքներն ավագ դպրոցից

- 1.4.1 Յետազոտության ընտրանքում ընդգրկված ԲՈՒՅ-երի ղեկավար կազմի հետ խորին հարցազրույցներն ու դասախոսների ֆոկուս խմբերի քննարկումները բացահայտեցին սպասելիքների մակարդակում առկա շատ կարևոր անհամապատասխանություններ ԲՈՒՅ-ի ակնկալիքների և ավագ դպրոցի առաքելության միջև: Մի կողմից, դպրոցի աշակերտներն ու նրանց ծնողները դժգոհում են դպրոցական գիտելիքից, պատճառաբանելով որ այն բավարար չէ ԲՈՒՅ ընդունվելու համար: Նրանք հույս ունեն, որ կրթական բարեփոխումները, մասնավորապես ավագ դպրոցի ստեղծումը, կբարելավի հենց այս խնդիրը: Մյուս կողմից, ԲՈՒՅ-երը պահանջում են դպրոցից երեխայի ընդհանուր զարգացվածություն, լայն մտահորիզոն, բոլոր առարկաների գծով բավարար գիտելիք, տրամաբանելու ունակություն:
- 1.4.2 ՀՀ կրթության և գիտության նախարարության հարցված փորձագետները նշում են, որ որևէ բուհ ֆորմալ չի ձևակերպել իր պահանջները: Այնուամենայնիվ, հարցված փորձագետները գտնում են, որ դիմորդների մոտ թույլ են զարգացած գործնական հմտությունները, առավել զերիշխում են տեսական և «անզիր արված» գիտելիքները:
- 1.4.3 ԲՈՒՅ-երն ակնկալում են ունենալ լավ պատրաստված դիմորդներ: Ինչպես դիպուկ նշեց Երևանի պետական գյուղատնտեսական ակադեմիայի վաստակաշատ դասախոսը՝ «Բերքի որակը կախված է սերմացուի որակից»: Այն հարցին, թե ի՞նչ ասել է դպրոցական կրթության որակ, դասախոսների կարծիքները բաժանվեցին: Այսպես,
- ավագ սերմնի դասախոսները որոշակի «կարոտախտով» են հիշում խորհրդային կրթական համակարգը և նշում, որ «հասունության ատեստատ» գաղափարը մեռավ Սովետի կործանման հետ միասին»,
  - երիտասարդ սերմնի դասախոսները գտնում են, որ «անկախության սերունդը» բոլորովին ուրիշ է, ուստի այլ մոտեցումներ են պետք կրթության հարցում. «Նրան չպետք է ասել “ինչ անել”, նրան պետք է միայն ուղղորդել»
- 1.4.4 Յետաքրքիր տարբերություն նկատվեց պետական և մասնավոր բուհերի դասախոսների դիրքորոշման մեջ: Եթե պետական բուհերի դասախոսները ակնկալում են դպրոցի շրջանավարտից ընդհանուր զարգացվածություն և լայն մտահորիզոն, ապա հետազոտության ընտրանքում ընդգրկված մասնավոր բուհի՝ Երևանի Գլաճորի համալսարանի դասախոսներն ակնկալում են ավագ դպրոցից խիստ մասնագիտացում, դեռևս 9-րդ դասարանից մասնագիտական կողմնորոշում, իսկ 10-12-րդ դասարաններում միայն մասնագիտական առարկաների գծով գիտելիքի խորացում:
- 1.4.5 Մի հարցում, այնուամենայնիվ, բոլոր դասախոսները միակարծիք էին. դպրոցում պետք է խորացվեն լեզուների, այդ թվում օտար՝ ռուսերենի և անգլերենի, մաթեմատիկայի և տրամաբանության իմացությունը, ինչպես նաև համակարգչից և

Ինտերնետից օգտվելու ունակությունները: Սրանք այն նվազագույն հիմքերն են, ըստ հարցված դասախոսների, որոնք կապահովեն դպրոցի շրջանավարտի ժամանակակից մասնագիտական գրականությունից օգտվելու, տրամաբանելու, կյանքում կողմնորոշվելու, իր նախասիրություններով մասնագիտություն ընտրելու և ինքնուրույն պարապելու հնարավորությունները:

- 1.4.6 ԲՈՒՅ-երի ղեկավարության հավաստմամբ, որպեսզի իրենց ակնկալիքներն ավագ դպրոցից իրողություն դառնան, անհրաժեշտ է համագործակցել ավագ դպրոցների հետ: Մասնավորապես, Երևանի պետական համալսարանը Երևան քաղաքի որոշ ավագ դպրոցներում դասախոսություններ է կազմակերպում, դասեր վարում, իսկ աշակերտներն այցելում են համալսարան՝ մոտիկից ծանոթանալու ֆակուլտետների և մասնագիտությունների առանձնահատկություններին:
- 1.4.7 Վանաձորի պետական մանկավարժական համալսարանը ձևավորել է հենակետային դպրոցների ցանց Լոռի մարզում, որոնցում հաստիքային աշխատողներ է պահում՝ մարզի դպրոցների մանկավարժական կադրերի կարիքներն ուսումնասիրելու և համալսարանի ուսանողներով համալրելու համար: Այդ դպրոցները նաև բազային են ուսանողական պրակտիկա անցկացնելու համար:
- 1.4.8 Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը և Երևանի պետական գյուղատնտեսական ակադեմիան «դպրոց-ԲՈՒՅ» համագործակցության առավել արդյունավետ ձևը համարում են բուհերին կից գործող վարժարանները: Այս վարժարաններում հիմնականում դասավանդում են ԲՈՒՅ-երի դասախոսները, իսկ վարժարանների աշակերտներն օգտվում են ԲՈՒՅ-երի ուսումնական կաբինետներից ու ուսումնալաբորատոր սարքավորումներից:
- 1.4.9 Զետագոտությունը պարզեց մեկ կարևոր հանգամանք ևս. ԲՈՒՅ-երի դասախոսներն ու ղեկավարությունը լավատեղյակ չեն ավագ դպրոցների ռազմավարության թե՛ մշակման, թե՛ իրականացման գործընթացներից: Շատ անգամ նրանք փորձում էին տեղեկություններ ստանալ հարցազրուցավարներից և խորհրդականներից: Կասկածից վեր է, որ կրթական բարեփոխումների գործընթացում դպրոց-ԲՈՒՅ համագործակցությունը առանցքային դեր ունի, ինչը հնարավոր չէ՝ անբավարար իրազեկվածության պայմաններում:
- 1.4.10 Միջազգային փորձագետ Թիմ Բլանչարդը, ուսումնասիրելով տարբեր երկրների ավագ դպրոցների մոդելները և առաջարկելով Հայաստանում կիրառելի մոդելը, դեռևս 2006 թվականին նախազգուշացնում և խորհուրդ էր տալիս. «Հավանաբար, ավագ դպրոցի զարգացման հետ մեկտեղ լարվածություն կառաջանա նաև ԲՈՒՅ-երի հետ: Ավագ դպրոցի զարգացման հետ մեկտեղ շատ կարևոր է, որ համակարգ







2.1.3 Թվարկված ծախսերն արդեն իսկ մեծ բեռ են միջին եկամուտներով ընտանիքների համար: Ավելին, դրանք շատ ավելի արագ են աճում, քան ընտանեկան բյուջեից այլ տեսակի սպառումներին ուղղվող ծախսերը: Դրա մասին են վկայում վիճակագրական տվյալները տնային տնտեսությունների սպառողական ծախսերի մասին: Այսպես, տնային տնտեսությունների միջին սպառողական ծախսերը 2004-2008թթ.-ին (մեկ առկա անդամի հաշվով) աճել են 1.5 անգամ, այն դեպքում երբ ուսման վճարները՝ ավելի քան 1.7 անգամ<sup>12</sup>:

2.1.4 Նկարագրված իրավիճակում ուսանողական վարկերի ներդրման հիմնահարցը դառնում է բավականին արդիական: Ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը «...հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալ ֆինանսավորում՝ ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար»<sup>13</sup>:

2.1.5 Ուսանողական վարկերի հայաստանյան շուկան ուսումնասիրելու, առաջարկն ու պոտենցիալ պահանջարկը գնահատելու նպատակով սույն հետազոտության փորձագիտական հարցազրույցների շրջանակում ընդգրկվեցին նաև առևտրային բանկերի մասնագետները: 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 22 առևտրային բանկեր: Առևտրային բանկերի ինտերնետ կայքերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ «կրթական վարկեր» (բանկերի տերմինաբանությամբ) տրամադրում են միայն նրանցից երեքը՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկու, Արդշինհիմվեստ և ԲՏԱ բանկերը:

2.1.6 Նշված բանկերի ինտերնետ կայքերում տեղադրված նյութերից միանգամայն հասկանալի էր, որ այսպես կոչված «կրթական վարկերը» իրականում սովորական կարծաժամկետ (3-12 ամիս տևողությամբ) սպառողական վարկեր են, որոնք բոլորովին չեն կարող հավակնել դասական իմաստով «ուսանողական վարկ» համարվելու (տե՛ս Լեռոյի 13):

2.1.7 Պարզելու համար կրթական վարկերի տրամադրման առկա վիճակը, բանկերի մտադրությունները, պատրաստակամությունը և իրական ուսանողական վարկեր տրամադրելու հնարավոր պայմաններն ու դրանց սպասարկման համար անհրաժեշտ ռեսուրսների աղբյուրները, փորձագիտական հարցազրույց է իրականացվել ՀՀ

**ԱրդՇին 13**  
**ձեռնարկի 13-րդ հոդվածի 13-րդ կետի 13-րդ կետ**

Իրականում «կրթական վարկ» համարվելու համար պետք է, որ վարկը լինի ուսանողական վարկ, այսինքն՝ ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը «...հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալ ֆինանսավորում՝ ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար»<sup>13</sup>:

- Իրականում «կրթական վարկ» համարվելու համար պետք է, որ վարկը լինի ուսանողական վարկ, այսինքն՝ ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը «...հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալ ֆինանսավորում՝ ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար»<sup>13</sup>:
- Իրականում «կրթական վարկ» համարվելու համար պետք է, որ վարկը լինի ուսանողական վարկ, այսինքն՝ ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը «...հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալ ֆինանսավորում՝ ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար»<sup>13</sup>:
- Իրականում «կրթական վարկ» համարվելու համար պետք է, որ վարկը լինի ուսանողական վարկ, այսինքն՝ ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը «...հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալ ֆինանսավորում՝ ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար»<sup>13</sup>:
- Իրականում «կրթական վարկ» համարվելու համար պետք է, որ վարկը լինի ուսանողական վարկ, այսինքն՝ ուսանողական վարկավորման համակարգի ներդրումը «...հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալ ֆինանսավորում՝ ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար»<sup>13</sup>:

հիման վրա: Տե՛ս. «Կրթություն, աղքատություն և տնտեսական ակտիվություն», էջ 49, ՄԱԾԾ/ՀՀ կառավարություն, Երևան-2002:

<sup>12</sup> «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», էջ 195, ՀՀ ԱԿԾ, Երևան-2009:

<sup>13</sup> «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի» Ղեկավար ձեռնարկ, էջ 62, կետ 4.2; ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ, Երևան, սեպտեմբեր 2009:

տարածքում գործող 5 առևտրային բանկերի հետ: Դրանք են. **Յունիբանկը, Դայեկոնոմբանկը, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը, Ամերիաբանկն ու ԲՏԱ բանկը:**

2.1.8 Հարցմամբ ընդգրկված բանկերից միայն երկուսն իրենց սպառողական վարկերի պորտֆելում ունենին առանձնացված՝ կրթության համար տրամադրվող վարկատեսակ: Նշված երկու բանկերից միայն մեկն է՝ **ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը**, որ իրականում տրամադրում էր այդպիսի վարկեր<sup>14</sup>: Բանկի առևտրային վարկերի բաժնի պետի հետ հարցազրուցում պարզվեց, որ իրենց կողմից տրամադրվող կրթական վարկը նպատակային է և ուղղվում է միայն ուսանողի ուսման վարձի վճարմանը: Ըստ որում, 2008թ.-ին տրամադրվել են **3237 այդպիսի վարկ**, իսկ 2009թ.-ի 9 ամիսների ընթացքում՝ արդեն **4169-ը**: Վարկի միջին չափը կազմել է **162-164 հազար դրամ**: Բանկի սպառողական վարկերի պորտֆելում կրթական վարկերը կազմում են **0.5-1.0%**:

2.1.9 Հետազոտությունը ցույց տվեց, որ կրթության նպատակով տրամադրվող վարկերի տարեկան տոկոսադրույքը՝ **22-24%** է: Բանկերն այսօր չեն տեսնում տոկոսադրույքի իջեցման որևէ հեռանկար, քանի որ վարկավորման նպատակով ներգրավված ֆինանսական ռեսուրսները երկրում այսօր թանկ արժեն: Կրթության նպատակով սպառողական վարկերի տրամադրման հիմնական պայմանները հետևյալն են.

- երրորդ անձի պարտադիր երաշխավորում՝ ծնողի կամ ուսանողի եկամուտների վերաբերյալ տեղեկատվության հետ մեկտեղ,
- տեղեկանք ԲՈՒՀ-ից ուսանողի առաջադիմության վերաբերյալ,
- հաշիվ-ապրանքագիր ԲՈՒՀ-ից, քանի որ վարկը տրվում է անկանխիկ,
- վարկավորման մասին որոշման կայացման տևողությունը՝ անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումից հետո, 1-4 օր:

*Բանկային մասնագետները նշում են, որ վարկի ապահովման նման մոտեցումը թույլ է տալիս նվազեցնել անորոշության գործոնը և առավելագույնս պաշտպանվել չվերադարձման հնարավոր ռիսկերից:*

2.1.10 Կրթության նպատակով սպառողական վարկ առաջարկող մյուս՝ **ԲՏԱ բանկը պահանջում է միայն գրավ և իբրև գրավի միջոց ծառայում է կենցաղային տեխնիկան, տան գույքը**: Սակայն բարձր տոկոսադրույքից և վարկի տրամադրման կոշտ պայմաններից զատ, առաջարկվող վարկը ուսանողի կամ նրա ծնողի համար ոչ այնքան հրապուրիչ է դառնում մեկ այլ գործոնի՝ գրավի միջոցների գնահատման ծախսերն իրենց կողմից հոգալու պատճառով: Քանի որ վարկավորման նպատակով տրամադրվող գումարներն այնքան էլ մեծ չեն՝ **50 հազարից մինչև 3 մլն. դրամը**, ուստի գնահատման ծախսերն էլ ավելի են բարձրացնում ծառայության գինը: Բացի այդ գրավի մասին պայմանագիր կազմելու համար բանկերը պահանջում են գույքի պատկանելիությունը հաստատող փաստաթղթեր, որոնք հիմնականում հաճախորդների մոտ բացակայում են:

<sup>14</sup> Սպառողական վարկի շրջանակներում կրթության համար վարկ առաջարկող **Դայեկոնոմբանկը** իրականում երբևէ չի իրականացրել նման վարկավորում:

2.1.11 Հարցմամբ ընդգրկված բանկերից մեկն էլ՝ **Ամերիաբանկը** տրամադրում է այսպես կոչված express վարկեր գանկազած կառիքի համար: Բանկի ներկայացուցչի հավաստմամբ յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվում է անհատական մոտեցում, և տոկոսադրույքները կարող են նույնիսկ սահմանվել ավելի ցածր, քան ֆինանսական շուկայում այսօր ձևավորված տոկոսադրույքներն են:

## 2.2 Կրթական վարկերի առաջարկի հիմնախնդիրները

2.2.1 ՀՀ-ում կրթական վարկերի առաջարկի միակ ձևավորողն այսօր բանկերն են: Պետությունը դեռևս չունի ուսանողական վարկերի տրամադրման մշակված հայեցակարգ, հետևաբար նաև հստակ մեխանիզմներ՝ ի տարբերություն տնտեսապես զարգացած երկրների: Ուստիև կրթական վարկերի հեռանկարների, պոտենցիալ առաջարկի և դրանց ներդրման հետ կապված հիմնախնդիրների մասին փորձագիտական հարցազրույցները հնարավոր էին միայն բանկերի մասնագետների հետ:

2.2.2 Բանկերի պատկերացումներն այն մասին, թե ինչպիսի՞ն պետք է իրականում լինի ուսանողական վարկը, համընկնում էին միայն մի կետում, որ դրանք պետք է լինեն երկարաժամկետ: Բանկերի ներկայացուցիչների հիմնական մասն այն կարծիքին է, որ դրանք պետք է տրամադրվեն ավելի ցածր տոկոսադրույքներով և նման ռեսուրսները բանկերին կարող է տրամադրել պետությունը՝ հատուկ ծրագրերի միջոցով:

2.2.3 Հարցված փորձագետների մի մասի կարծիքով ուսման տարիների ընթացքում պետք է սպասարկվեն միայն տոկոսադրույքները, իսկ աշխատանքի անցնելուց հետո պետք է սկսվի հիմնական գումարի վերադարձման գործընթացը: Մի մասն էլ այն մոտեցումն ունի, որ դրանք պետք է տրամադրվեն մոտավորապես հիպոթեքային վարկերի սխեմայով, այսինքն, ուսման տարիների ընթացքում սպասարկվեն տոկոսադրույքները և հիմնական գումարից մի ինչ-որ մաս՝ ապագայում բեռը թեթևացնելու նպատակով:

2.2.4 Բանկերից միայն մեկի՝ **Ամերիաբանկի** ներկայացուցիչն ուներ արմատապես այլ մոտեցում՝ տոկոսադրույքները կարող են լինել այնքան, որքան շուկան է սահմանում, խնդիրը հանգում է իրատեսական ներման ժամկետ (grace period) սահմանելուն: Քանի որ ուսանողական վարկերը յուրահատուկ են, ապա ուսանողը ուսումնառության տարիներին ոչինչ չպետք է վճարի: Վճարման փուլը պետք է սկսվի նրա աշխատանքի անցնելու պահից: Բայց այս դեպքում ուսանողական վարկերի տրամադրման համար պետք է բոլոր անհրաժեշտ նախադրյալներն առկա լինեն: Այսպես, ԲՈՒՀ-երը պետք է կարողանան տրամադրել հետևյալ տեղեկություններն իրենց շրջանավարտների մասին՝

- շրջանավարտների թվաքանակն ըստ առանձին մասնագիտությունների և որակավորումների,

- ուսումն ավարտելուց հետո նրանց աշխատանքի տեղավորման միջին ժամկետը՝ ըստ մասնագիտությունների և որակավորումների,
- նրանց աշխատանքային առաջին տարվա եկամուտներն՝ ըստ մասնագիտությունների և որակավորումների:

Այսինքն, փորձագետը՝ որպես ուսանողական վարկերի տրամադրման պարտադիր նախապայման համարում է ԲՈՒՀ-երի կողմից շրջանավարտների մասին տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մոնիթորինգային համակարգի ներդրումը: Նման տեղեկատվության բացակայության դեպքում բանկերը պարզապես ի վիճակի չեն լինելու գնահատելու իրենց ռիսկերն ու հաշվարկել ուսանողական վարկերի իրական տոկոսադրույքները:

2.2.5 Մյուս մոտեցումը, որ առաջարկվեց բանկային փորձագետների կողմից որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ, դա ԲՈՒՀ-ի կողմից այսպես կոչված «**տրաստային հիմնադրամների**» ստեղծումն է, երբ ԲՈՒՀ-ն իր գյուլքի գրավադրմամբ գարանտ է հանդես գալիս իր իսկ ուսանողների համար՝ ուսանողական վարկեր ստանալիս: Վարկավորման նման մոդելը, փորձագետի կարծիքով, կբարձրացնի ԲՈՒՀ-ի մոտիվացիան կրթության խիստ բարձր որակի ապահովման և աշխատանքի շուկայում առաջարկ-պահանջարկ հարաբերակցության ուսումնասիրման առումով, քանի որ վերջին հաշվով ուսանողի՝ այդ շուկայում հաջող ձևով իրացվելուց հետո է միայն հնարավոր մարել ստանձնած վարկային պարտավորությունները:

2.2.6 Հարցմանը մասնակցած բանկերի մի մասի ներկայացուցիչների կարծիքով բոլոր ռիսկերը իր վրա պետք է վերցնի կամ պետությունը (եթե ուզում է խթանել վարկավորման այս տեսակը), կամ ինքը վարկառուն՝ գրավի միջոցով: Հնչեց նաև տեսակետ, որ ուսանողական վարկեր կարող են տրամադրվել պետությունից ներգրավված ռեսուրսների հաշվին: Դրանք բանկերին կարող են տրամադրվել ցածր տոկոսադրույքներով կամ զրոյական տոկոսադրույքով: Այս դեպքում բանկը պատրաստ է հանդես գալ միայն որպես սպասարկող օղակ:

2.2.7 Բանկային փորձագետների մոտ մտահոգության լուրջ խնդիր է ԲՈՒՀ-ի այսօրվա շրջանավարտի և բարձրագույն կրթության որակի հարցը: Նրանց կարծիքով շրջանավարտների **միայն 10%-ին** է հաջողվում համարժեք աշխատանք գտնել: Այսինքն, ուսանողական վարկի վերադարձելիության հարցը շատ խնդրահարույց է: Ուսանողական վարկեր տրամադրելիս հարցված փորձագետները անպայման հաշվի կառնեին նաև այն ԲՈՒՀ-ը, ուր պատրաստվում է սովորել վարկառուն, և այն մասնագիտությունը, որ նա պատրաստվում է ստանալ: Հատկանշական է, որ բանկերը պատրաստ էին ուսանողական վարկեր տրամադրել ավելի շուտ առաջատար արևմտյան ԲՈՒՀ-երում սովորելու համար, քան տեղական որևէ ԲՈՒՀ-ում սովորողին, քանի որ ունեին վստահություն նրանց շրջանավարտների կողմից համարժեք վարձատրությամբ աշխատանք գտնելու հարցում: Ինչ վերաբերում է մասնագիտություններին, ապա բանկերը ճշմարտացիորեն նշում են, որ այսօր մի շարք



Հայաստանի տիպի անցումային երկրների փորձը, նրանց կողմից արձանագրված սխալներն ու ձեռքբերումները:

#### 2.2.10 Ամփոփելով, կարելի է ամել հետևյալ եզրահանգումները.

- ❖ գործող բանկային համակարգն այսօր չունի իրական ուսանողական վարկեր տրամադրելու ձևավորված մշակույթ,
- ❖ ուսանողական վարկերի ներդրման գործընթացը անհրաժեշտ է զուգակցել կրթական համակարգի արմատական բարեփոխումների համաչափ զարգացումների հետ,
- ❖ աշխատանքի շուկայի, այդ թվում զբաղվածների և գործազուրկների բնութագրիչ ցուցանիշների, աշխատավարձերի, մասնագիտությունների պահանջարկի մասին տեղեկատվությունը պետք է լինի վստահելի և հասանելի,
- ❖ և ամենակարևորը՝ պետք է շեշտակիորեն բարձրացվի աշխատանքի շուկայում տարվող քաղաքականության արդյունավետությունը:

Վերջապես, բանկերի ներկայացուցիչները նշում են մեկ այլ լուրջ փաստ ևս. այսօր բաց է նաև բանկային ենթակառուցվածքների զարգացման հարցը, առանց որի լուծման և վաղ է խոսել ուսանողական վարկերի մասին:

### 2.3 Կրթական վարկերի պահանջարկի հիմնախնդիրները

2.3.1 Կրթական վարկերի ներքին պահանջարկն ուսումնասիրելու նպատակով ուսանողների, նրանց ծնողների, ուսուցիչների և դասախոսների, դպրոցի և ԲՈՒՀ-ի տնօրինությանն ուղղված հարցաթերթերում և հարցաշարերում ձևակերպվել էին հետևյալ հարցերը.

- ուսանողի հարցաթերթում և ռեկտորի հարցաշարում - ուսանողների ֆինանսական օժանդակության և բուհական ու հետբուհական կրթական վարկերի համակարգի ներդրման կարևորության մասին,
- աշակերտի հարցաթերթում – վճարովի հիմունքներով ԲՈՒՀ ընդունվելու դեպքում կրթական վարկից օգտվելու պատրաստակամության մասին,
- աշակերտի և ուսանողի ծնողի հարցաշարում - կրթական վարկերի և դրանք տրամադրող բանկերի մասին տեղեկացվածության ու վարկերից օգտվելու պատրաստակամության մասին,
- դպրոցի ուսուցիչների և ԲՈՒՀ-ի դասախոսների ֆոկուս խմբի հարցաշարում - կրթական վարկերի միջոցով կրթությանն օժանդակելու և մատչելիությունը բարձրացնելու մասին:

2.3.2 Նշված հարցումների բոլոր մասնակիցները, որոնց ուղղակիորեն հարց է տրվել. «Կան բանկեր, որ վարկ են տալիս բուհերի սովորողներին, տեղյակ եք արդյո՞ք դրա մասին», մեծամասամբ պատասխանել են, որ անտեղյակ են: Նրանց մի մասը լսել է, որ ԱԿԲ-Կրեդիտ Ազրիկոլ բանկը հեռուստատեսությամբ գովազդում է «ինչ-որ կրթական վարկեր», բայց չգիտի դա ինչ է: Եվ ընդամենը մեկ ուսուցիչ Գեղարքունիկի մարզի Վարդենիկ գյուղից, որ իր տղայի ուսման վարձը վճարելու նպատակով անձամբ






պետք տրվեն մինչև 3% տոկոսադրույքով, 53.8%-ը պնդում են, որ վարկը պետք է ամբողջովին «ծածկի» ուսման վարձավճարը: Եվ եթե վարկերը լինեն գրավիչ, ապա նրանց 44.2%-ը կվերցնեն 200.000-ից մինչև 400.000 դրամ վարկ:

2.3.9 ԲՈՒՅ-ի ղեկավարներն ու դասախոսները, քննարկելով կրթության մատչելիության հարցը, նախապատվությունը տալիս են դրամաշնորհներին և բուհական արտոնությունների համակարգին, պատճառաբանելով, որ աղքատ ընտանիքների համար վարկային համակարգը անհասանելի է. ո՞ր մի բանկը նրանց կվարկավորի, և ինչպե՞ս նրանք կփակեն այդ վարկերը: Ուստիև առավել գործնական և իրականում արդյունավետ են համարում արդեն իսկ բուհերում գործող ուսման վարձի զեղչերի և վճարովի/անվճար ռոտացիոն համակարգերը: Այսպես, ԵՊՅ-ն յուրաքանչյուր տարի անապահով ընտանիքների (որոնց ընտրության չափանիշները հաստատում է համալսարանի ղեկավարող խորհուրդը) շուրջ 2000 ուսանողի տրամադրում է ուսման վարձի 30-50% զեղչեր:

2.3.10 Ուսանողների ծնողների հարցմամբ պարզվեց, որ իրապես, հիմնականում կրթական վարկերից օգտվելու պատրաստակամություն ունեն միջին և միջինից բարձր կենսամակարդակ ունեցող ծնողները՝ նրանց շուրջ 15%-ը կվերցնեն վարկ առանց նախապայմանների ու ևս 44-45%-ը կվերցնեն վարկ, եթե պայմանները գրավիչ լինեին, տե՛ս ստորև բերված գծապատկերը:



2.3.11 Բուհերի ղեկավարները առաջարկում են համագործակցություն բանկերի հետ՝ կրթական վարկերի քաղաքականության ձևավորման, տեղեկության տարածման և համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ավելին, ուսանողական վարկերի հիմնական կոնտինգենտը կձևավորվի միջին խավից, իսկ աղքատ ընտանիքների ուսանողները միևնույն է պետք է ընդգրկվեն ուսանողական նպաստների պետական համակարգում, տե՛ս Լեռնիկ 15:

2.3.12 Փորձագետների կարծիքով ուսանողական վարկերի ներդրման քաղաքականությունը պետք է նշակվի ոչ թե առանձին, այլ որպես բարձրագույն կրթության ֆինասավորման ընդհանուր քաղաքականության մաս: Նման քաղաքականությունը պետք է ներառի նաև կրթության համակարգի և աշխատաշուկայի «փոխկապակցվածության» և «արագ արձագանքման» մեխանիզմները: Հակառակ դեպքում, վարկերի տրամադրումը կմնա ռիսկային բանկերի և ոչ գրավիչ ուսանողների մեծ մասի համար:



4. Դասախոսական կազմի որակի ապահովում - բուհերը պետք է մշակեն որոշակի ուղիներ՝ ապահովելու համար դասավանդման գործընթացում ընդգրկված աշխատակազմի բավարար որակավորումն ու իրավասությունը:
5. Ուսումնական միջոցներ և աջակցություն ուսանողին - բուհերը պետք է ապահովեն յուրաքանչյուր ուսումնական ծրագրի համար համապատասխան և համարժեք ուսումնաօժանդակ միջոցների հասանելիությունը ուսանողների համար:
6. Տեղեկատվական համակարգեր - բուհերը պետք է ապահովեն համապատասխան տեղեկատվության շարունակական հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը՝ արդյունավետ կառավարում իրականացնելու համար, դրանք կարող են տարբեր լինել տարբեր բուհերում, բայց պետք է ընդգրկեն հետևյալ նվազագույն բաժինները.
  - ա. ուսանողների առաջադիմությունը,
  - բ. շրջանավարտների՝ աշխատանքի ընդունվելու վերաբերյալ տեղեկատվությունը,
  - գ. ուսանողների բավարարվածությունը ուսումնական ծրագրերից,
  - դ. ուսուցիչների արդյունավետությունը,
  - ե. ուսանողների խմբի հիմնական բնութագիրը,
  - զ. առկա ուսուցողական միջոցները և դրանց գները,
  - է. բուհի արդյունավետության սեփական ցուցանիշները:
7. Հանրային տեղեկատվություն - բուհերը պետք է պարբերակաբար հրապարակեն իրենց առաջարկած ուսումնական ծրագրերի և պարզևատրումների մասին անկողմնակալ և օբյեկտիվ տեղեկատվություն՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական բնույթի:

Ստորև ներկայացվածը՝ հետազոտության և ուսումնասիրության արդյունքներն են, շարադրված ըստ վերը նշված յոթ ստանդարտների:

- 3.1.1 Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման և պետական վերահսկողության գործընթացները կարգավորվում են մի շարք օրենքներով<sup>15</sup>, համաձայն որոնց բարձրագույն կրթության համակարգում որակի վերահսկման և հավատարմագրման պատասխանատվությունը վերապահված է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:
- 3.1.2 Բոլոնյան գործընթացի շրջանակներում 2008 թ. դեկտեմբերին ՀՀ Կառավարության որոշմամբ հիմնադրվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) հիմնադրամը, որը բացի որակի արտաքին հավաստմանն ուղղված նպատակներից, կոչված է իրականացնելու.

<sup>15</sup> «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին», «Լիցենզավորման մասին», «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքներ:

- մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման ներքին (ներհաստատությունային) համակարգերի գնահատում, մասնագիտական ուսումնական հաստատություններին դրանց բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,
- մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատման չափանիշների և մեթոդների մշակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հասարակության իրազեկում:

3.1.2 Այդուհանդերձ, բարձրագույն կրթության որակի բարելավման ազգային քաղաքականությունը կառուցվել է Եվրոպական ստանդարտների ընդհանուր նորմատիվային հենքի վրա, որոնց շրջանակում յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է ձևավորում որակի քաղաքականությունը և համակարգը՝ ելնելով իր առաքելությունից և զարգացման ռազմավարությունից: Ազգային քաղաքականությունը միայն ուղղորդում է այդ գործընթացը, սահմանելով որոշակի պարտադիր պայմաններ բուհերում ներքին որակի համակարգերի ստեղծման ուղղությամբ:

3.1.3 Այսպես, որակի նորաստեղծ բուհական համակարգերը պետք է համատեղեն և փոխկապակցեն որակի ապահովման չորս ուղղություններ՝ հաշվետվականություն, համապատասխանություն Եվրոպական ստանդարտներին, որակի կառավարում և որակի բարելավում:

3.1.4 Նշված ուղղություններով աշխատանքները համակարգված և նպատակաուղղված կատարելու համար բուհերին օգնություն են ցուցաբերել մի շարք միջազգային կառույցներ: Բաց հասարակության ինստիտուտի (OSI) օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ իրականացվել են «ԵՊՀ ուսումնական գործընթացի կառավարման համակարգի կատարելագործում. կրթության որակի ապահովում» (2003թ.), «ԵՊՀ-ում կրթության որակի գնահատման, ապահովման և վերահսկման համակարգի զարգացում» (2007թ.), «Որակի ապահովման շրջանակային մոդելը միջհամալսարանական կոնսորցիումի օրինակի վրա» (2008թ.) նախագծերը: 2008թ.-ից մեկնարկվեց նաև Եվրոպական ՏԵՄՊՈՒՍ ծրագրի կողմից ֆինանսավորվող «Որակի ապահովման ներքին համակարգը Հայաստանում» ծրագիրը: Թվարկված ծրագրերը նպատակ ունեն (և առ այսօր ունեն) կառուցելու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման ստանդարտների և ուղենիշերի պահանջներին համահունչ որակի ապահովման հայաստանյան ներբուհական համակարգ:









- կրեդիտային համակարգին համահունչ ուսուցման, դասավանդման և քննական մեթոդների կիրառման փորձի, ինքնուրույն ուսուցումը խթանող ուսումնական, այդ թվում՝ ինտերակտիվ և էլեկտրոնային ռեսուրսների բացակայություն,
- ուսումնական գործընթացների կառավարման համակարգչային տեղեկատվական համակարգերի բացակայություն<sup>17</sup>:

### 3.3 Ուսանողների գնահատում

- 3.3.1 Հարցման քույր մասնակիցները ուսանողների գնահատման բարեփոխումների ամենամեծ նվաճումը համարում են ընթացիկ (կամ այսպես կոչված՝ միջանկյալ) քննությունների համակարգը: Առաջինն այդ համակարգը ներդրվել է Երևանի պետական համալսարանի բակալավրիատում. սկսած 1995-96 ուստարվանից այստեղ ուսանողներն ուսումնական տարվա ողջ ժամանակահատվածում հանձնում են դասավանդված նյութի գրավոր քննություններ:
- 3.3.2 Ղասախոսները, քննարկելով ուսանողների գնահատման ընթացիկ քննությունների համակարգը, իրենց դրական կարծիքները արտահայտել են հետևյալ կերպ.
- «Ամենադրական ներդրումը ԲՈՒՀ-ում՝ միջանկյալ քննությունների համակարգն է» - *Վանաձորի պետական մանկավարժական համալսարան*.
  - «Միջանկյալները ստիպում են ուսանողին ավելի հիմնարար սովորել առարկան» - *Երևանի պետական գյուղատնտեսական ակադեմիա*.
  - «Միջանկյալ քննություններն օգնում են դասախոսին անհատական մոտեցում ցուցաբերել» - *Գավառի պետական համալսարան*.
  - «Անշուշտ, բարձրացնում է ուսումնառության արդյունավետությունը» - *Երևանի Գլաձորի համալսարան*:
- 3.3.3 Փորձագետները ավելի լայն են տեսնում միջանկյալ քննությունների դերը: Նրանք համարում են ուսանողների գնահատման այս ձևը բարձրագույն կրթության որակի վերահսկման ընդհանուր գործընթացի հիմնական բաղադրիչ: Բացի այդ նշվում է նաև միջանկյալ քննությունների կարևոր դերը ուսուցման և ուսումնառության գործընթացի միջև հետադարձ կապ սահմանելու գործում:
- 3.3.4 Ուսանողների 90%-ից ավելին միջինից բարձր է գնահատել առարկայական գիտելիքների ներսեմեստրային միջանկյալ գնահատման պրակտիկան, այդ թվում նրանց **47.3%-ը**՝ շատ է կարևորել այն:
- 3.3.5 Սակայն, ԲՈՒՀ-երի ղեկավարներն ու դասախոսները նշում են, որ ընթացիկ քննությունները ընդամենը մեկ օղակն է ուսանողների գնահատման հարցում, որն, ըստ էության «եռաչափ» է, քանի որ դասախոսը պետք է գնահատի.

<sup>17</sup> «Անցումը կրեդիտային համակարգին ՀՀ բուհերում. ներկա իրավիճակ, զարգացումներ, մարտահրավերներ»: Եզրափակիչ խորհրդաժողովի նյութերի ժողովածու, էջ 71, Երևան 2008:



3.3.9 Ամփոփելով, կարելի է եզրահանգել, որ կրեդիտների հաշվառման հենքի վրա կառուցած նոր գնահատման համակարգը դեռ ձևավորման փուլում է, և փորձի կուտակման կարիք ունեն բուհական համակարգի բոլոր մասնակիցները՝ ղեկավարությունը, դասախոսական կազմը և իրենք՝ ուսանողները: Կրեդիտահենք գնահատման համակարգի արդյունավետ ներդրման հարցում դասախոսները մեծ դեր են հատկացնում.

- միջբուհական փորձի փոխանակման ակտիվացմանը,
- բուհի մասնագիտացումից և մասնագիտությունների պրոֆիլից ելնելով գնահատման առանձնահատուկ սխեմաների մշակմանը, որը կլրացնի ուսանողի գնահատման ամբողջական համակարգը,
- արտալսարանային, գործնական ժամերի և ուսանողական պրակտիկայի գնահատման չափանիշների կատարելագործմանը,
- հստակ ընթացակարգերի, մեթոդական ուղեցույցների և խորհրդատվական ձեռնարկների պատրաստմանն ու տարածմանը:

### 3.4 Դասախոսական կազմի որակի ապահովում

3.4.1 Դասախոսները՝ ամենակարևոր օղակն են ուսումնառության գործընթացում: Նրանց կարողությունների հարատև կատարելագործումը դրված է բոլոր հետազոտված բուհերի օրակարգում: Այս գործընթացը բուհերում իրականացվում է երկու ուղղությամբ.

- դասախոսական կազմի ներուժի/կարողությունների զարգացում,
- դասախոսների համապատասխանության գնահատում:

3.4.2 Նշված ուղղություններից առաջինն իրականացվում է դասախոսների որակավորման բարձրացման և վերապատրաստման համակարգի միջոցով, որը նույնպես կազմված է երկու ուղղություններից. ա/ մասնագիտական վերաորակավորում և ք/ մանկավարժական հմտությունների զարգացում:

3.4.3 Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողների 91.1%-ը «չատ» և «բավականին» է կարևորում դասախոսական անձնակզմի վերապատրաստման անհրաժեշտությունը բուհերում ներքին որակի ապահովման արդյունավետության հարցում: Դա տրված պատասխանների ամենամեծ տեսակարար կշիռն էր «Շրջանավարտների դիպլոմների լայն ճանաչման ապահովում» պատասխանից հետո (պատասխանների **92.6%**): Ըստ որում, դասախոսների վերապատրաստման հարցը միակն էր, որ հարցված ուսանողներից և ո՛չ մեկը չի նշել «կարևոր չէ» պատասխանը՝ **«0%»**, ինչպես նաև ամենաքիչն է ստացել «պակաս կարևոր է» պատասխանը՝ **0.4%**:

3.4.4 Դասախոսի որակի մասին խոսելիս, իրենք դասախոսները նշում են, որ ուսանողների նոր սերունդն իրենցից պահանջում է ոչ այնքան «սովորեցնելու», որքան «ուղղորդելու», «կողմնորոշելու» ունակություն: Հատկապես, գնահատվում են

դասախոսի գործնական/պրակտիկ գիտելիքները, քանի որ տեսությունը հասանելի է նաև դասագրքերից և ինտերնետից:

- 3.4.5 Դասավանդման գործընթացը նույնպես պետք է արդիականցվի, գտնում են դասախոսները: «Ինտերակտիվ միջոցների, այդ թվում համակարգչային տեխնիկայի կիրառումը շատ մեծ էֆեկտ է տալիս. ուսանողների տեսողական հիշողությունն ավելի լավն է. քան լսողական», - ասում են Գավառի պետական համալսարանի դասախոսները:
- 3.4.6 Սակայն, նոր մեթոդների ներմուծումը բուհ դժվար է ընթանում, քանի որ, ինչպես նշում են բուհերի ղեկավարներն ու դասախոսները, դրանք պահանջում են լուրջ նյութատեխնիկական բազա՝ համակարգիչներ, պրոյեկտորներ, ինտերնետ կապ, ինչպես նաև դասախոսների մոտիվացում. «Դասախոսների գաժճ աշխատավարձերը չեն նպաստում պահանջվող չափորոշիչներին համապատասխան դասախոսական կազմի ապահովմանը», - խորացված հարցազրույցում նշեց Երևանի պետական ագրարային համալսարանի պրոռեկտորը:
- 3.4.7 Դասախոսական կազմի որակի ապահովման երկրորդ կարևոր ուղղությունը՝ դասախոսների համապատասխանության գնահատումն է: Վերջինս կատարվում է երկու մակարդակներում. բուհերի ղեկավարության և ուսանողների մակարդակում: Բուհերի ղեկավարությունը լայնորեն կիրառում է պարբերական՝ 2-3 տարին մեկ անգամ դասախոսների ատեստավորման մեխանիզմը: Ընթացիկ գնահատման համար կազմակերպվում են դասալսումներ, այդ թվում ոչ միայն ղեկավարության, այլև աշխատանքային գործընկերների կողմից:
- 3.4.8 Բոլոր հարցված բուհերի ղեկավարները չափազանց կարևորում են ուսանողական հարցումները: Երևանի պետական համալսարանի պրոռեկտորը նշում է. «Դասախոսական կազմի կարողությունների գնահատման հիմնական ձևն առայժմ մնում է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական ամենամյա հարցումները»: ԵՊՀ-ում այս ավանդույթը ներդրվել է 2004թ.-ից սկզբից տարեկան, իսկ 2007/08 ուստարվանից սկսած՝ կիսամյակային պարբերականությամբ:
- 3.4.9 ԲՈՒՀ-երի ղեկավարներ ու դասախոսները նշում են այդ հարցումներում ուսանողների բարձր՝ **70-80%** ընդգրկվածության մասին: Դասախոսների ֆոկուս խմբերից պարզվեց, որ «Դասախոսն ուսանողի աչքերով» անանուն ուսանողական հարցումների արդյունքներն ազդում են նրանց ատեստավորման արդյունքների վրա (Երևանի պետական բժշկական համալսարան), հարցումների արդյունքների հիման վրա դասախոսները ստանում են վարկանիշային միավորներ (Վանաձորի պետական մանկավարժական համալսարան), իսկ որոշակի դեպքերում դրանք հիմք են հանդիսանում նաև կադրային փոփոխությունների (Երևանի Գլաձորի համալսարան):
- 3.4.10 Միաժամանակ, դասախոսները հայտնում են որոշ անվստահություն ուսանողների գնահատման օբյեկտիվության հետ կապված: «Ուսանողները հաճախ սուբյեկտիվ են

խիստ դասախոսների նկատմամբ» - ասում են Երևանի պետական ագրարային համալսարանի դասախոսները:

### 3.5 Ուսումնական միջոցներ և աջակցություն ուսանողին

- 3.5.1 Բուհերում ներքին որակի ապահովման այս ստանդարտը նախատեսում է գրադարանային համալիրի արդիականացում, համակարգչային բազայի ընդլայնում, ռեսուրս կենտրոնների ստեղծում, ուսումնական և գիտական լաբորատորիաների վերազինում, ուսումնական գործընթացի մեթոդական ապահովում:
- 3.5.2 Բոլոր հարցված բուհերում, ըստ ղեկավարների խորացված հարցազրույցի, ինտենսիվ աշխատանքներ են տարվում այս ուղղությամբ: Ամենաբարվոք վիճակում գտնվում են գրադարանները. բոլորը նշում են մասնագիտական գրականության հարուստ հավաքածուի, դասագրքերի բավարար քանակության, քույր-համալսարանների կողմից տարբեր լեզուներով հրատարակված նոր գրքերի նվիրատվությունների մասին:
- 3.5.3 Ավելի դժվար է գործը համակարգչային տեխնիկայի ձեռք բերման առումով: Չնայած բուհերում կան համակարգչային առանձնացված լսարաններ, բայց ուսուցման նոր մեթոդները պահանջում են յուրաքանչյուր ուսանողի հաշվով մեկ համակարգչի առկայություն: Որոշ բուհերում՝ ԵՊՀ, ԵՊԲՀ, համակարգչային հագեցվածությունն ավելի բարձր է, քան մնացածում: Սակայն, բոլոր դեպքերում բուհերի դասախոսներն ու ղեկավարները առկա վիճակը համարում են դեռ շատ հեռու «տեղեկացված հասարակություն» համարվելու չափանիշից:
- 3.5.4 Փորձագետները նշում են նաև ֆինանսական լուրջ խնդիրները: Բարձրագույն կրթության ոլորտի ծախսերը ներկայումս կազմում են ՀՆԱ-ի շուրջ **0.2%** և ընդհանուր կրթական բյուջեի ընդամենը **8-9%-ը**: Այս ցուցանիշները դեռևս զգալիորեն զիջում են ՏՀԶԿ (OECD) միջին ցուցանիշներին, որը համապատասխանաբար կազմում է **1.3 և 20%**: Հայաստանում բուհական համակարգում ընդգրկվածության աստիճանը վերջին 10 տարիների ընթացքում զգալիորեն աճել է: Սակայն այս աճը չի զուգորդվել պետական ֆինանսավորման ավելացմամբ: Ավելին, կառավարության ֆինանսավորման մասնաբաժինը այդ տարիներին **47%-ից կրճատվել է 15%-ի**: Այսօր պետական բուհերի լրացուցիչ ֆինանսավորման մեծ մասը առաջանում է վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձերից՝ **կազմելով ընդհանուր եկամուտների 65%-ը**:
- 3.5.5 Առաջին հերթին ֆինանսավորման սակավությունն ազդում է ուսումնական և գիտական լաբորատորիաների հագեցվածության վրա: Դրանք նյութերով և անհրաժեշտ սարքավորումներով համալրելու հարցը, ըստ փորձագիտական հարցումների, հատկապես օրախնդրային է ճարտարագիտական և ագրարային համալսարաններում, որտեղ մասնագիտությունների մեծ մասի դասավանդման

գործընթացը կապված է լաբորատոր փորձերի հետ: Հենց այս բուհերում է, որ ուսման վարձերը համեմատաբար ցածր են՝ պայմանավորված նաև ուսանողների կոնտինգենտի հետ: «Իրավագիտությունը չի պահանջում ոչ մի լաբորատոր փորձ, քայլ իրավաբան դառնալու համար ուսման վարձ է սահմանվել 600-700 հազար դրամ: Իսկ ինչպես պատրաստել ինժեներ առանց սարքավորումների վրա գործնական աշխատանքների: Մեր վարձերը անհամեմատ ցածր են, իսկ եթե բարձրագույնը՝ կլորոզները առանց այն էլ միջին և անապահով խավից եկող սովորողներին» - ասում է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտորը:

3.5.6 Բացի ուսման գործընթացին աջակցող միջոցների առկայությունը, եվրոպական «աջակցություն ուսանողին» ստանդարտը նախատեսում է նաև ուսանողների նկատմամբ որոշակի սոցիալական քաղաքականության իրականացում, կամ ինչպես փորձագետներն են նշում սովորողներին **«սոցիալական փաթեթի»** տրամադրում:

3.5.7 Ուսանողների գրեթե **98%-ը** գտնում է, որ հատկապես կարիքավոր ընտանիքների երեխաներին պետք է տրամադրվի ֆինանսական օժանդակություն մասնագիտական կրթություն ստանալու համար: Ըստ որում հարցվածների **73.2%-ը** շատ է կարևորում այդպիսի օժանդակության անհրաժեշտությունը (ի դեպ, ամենաբարձր ցուցանիշն է ուսանողներին ուղղված ֆինանսական աջակցության տեսակների վերաբերյալ հարցաշարում):

3.5.8 Փորձագետները նշում են, որ պետության և բուհերի կողմից բարձրագույն կրթության ոլորտում սոցիալական քաղաքականության շրջանակում ներկայումս իրականացվում է որոշակի աջակցություն ուսանողների որոշ խմբերի համար: Դրանք են.

- պետական կրթաթոշակները, ըստ որում անկախ առաջադիմությունից դրանք տրամադրվում են սոցիալական խոցելի կարգավիճակ ունեցող սովորողներին (երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ, զոհված ազատամարտիկի երեխայի և այլն),
- անսեկան նպաստները՝ կարիքավոր սովորողներին՝ սոցիալական ծախսերը հոգալու համար,
- ուսման վարձի ամբողջովին (անվճար) կամ մասնակի գեղչերը՝ որոնք նույնպես պարտադիր են որոշակի սոցիալական խմբերի ուսանողների համար,
- կեցության դոտացիան՝ ուսանողական հանրակացարանում բնակվելու համար:

3.5.9 Սակայն, պետության և բուհերի կողմից ուսանողներին տրամադրվող ֆինանսական օժանդակության ծավալները փորձագետները գնահատում են լիովին անբավարար, քանի որ դրանք տարածվում են շատ քիչ քանակությամբ ուսանողների վրա: Հատկապես, կեցության դոտացիան, որից օգտվում է ընդամենը 400 ուսանող: «Սոցիալական փաթեթը» ոչ միայն պետք է մեծացվի՝ կարիքավոր ուսանողների բոլոր խմբերին դրանում ներառելու առումով, այլև պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով ուսանողների առողջապահական և տրանսպորտի ծառայությունների դիմաց կատարված վճարների որոշակի փոխհատուցումը, մատչելի գներով հանգստի և

սննդի կազմակերպումը, մասնագիտական գրականության և տեղեկատվության մատչելիությունը:

### 3.6 Տեղեկատվական համակարգեր և հրապարակային տեղեկատվություն

3.6.1 Այս ստանդարտը բավականին լուրջ դեր ունի բուհի հաշվետվողականության, թափանցիկության և կառավարման արդյունավետության ապահովման, ինչպես նաև ինքնագնահատման և ինքնավերլուծության համար:

3.6.2 Բոլոր բուհերի ղեկավարները նշում են, որ ռազմավարական ծրագրերում նախատեսված են հստակ քայլեր տեղեկատվական համակարգերի ձևավորման և հասարակությանն ուղղված տեղեկատվության տրամադրման ուղղությամբ: Մասնավորապես, Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) պրոռեկտորը մատնանշում է իրենց նոր մշակվող ստրատեգիկ պլանում նախատեսված հետևյալ միջոցառումները.

➤ տեղեկատվական համակարգերի գծով

- ուսանողների ընթացիկ և կիսամյակային առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության պարբերական հավաքում և մշակում,
- գիտական խորհրդի, ռեկտորատի և դեկանատների մակարդակներով քննաչրջանի և ավարտական քննությունների արդյունքների մանրակրկիտ վերլուծություն,
- կեղեկատվական-վերլուծական էլեկտրոնային համակարգի ներդրում՝ համալսարանի գործունեության տարբեր բնագավառների վերաբերյալ բազմագործոնային հետազոտության նպատակով;

➤ հասարակությանն ուղղված տեղեկատվության գծով

- ընդունելության սահմանված չափաքանակների ամենամյա հարապարակումներ՝ ըստ մասնագիտությունների,
- պարբերաբար հրատարակվող կատալոգներ և այլ գովազդային տեղեկատվական նյութեր ՀՊԱՀ-ի և նրա առանձին ֆակուլտետների վերաբերյալ,
- «Հասկ» և «Ուսանողական հայացք» պարբերականների հրատարակում,
- ՀՊԱՀ-ի գործունեության ուսումնական, գիտական, մշակութային և այլ ոլորտները լուսաբանող Վեբկայքի ստեղծում:

3.6.3 Երևանի պետական համալսարանի պրոռեկտորը ներկայացրեց հրապարակումների միա մբողջ փաթեթ, որը տրամադրվում է ուսանողներին և հասարակության լայն շրջանակներին տպագիր գրքերի և CD-ների տեսքով: Դրանք լուսաբանում էին պետական համալսարանի՝ որպես կրթօջախի, ամբողջ գործունեությունն ընդհանրապես, ինչպես նաև պարունակում էին համառոտ տեղեկատվություն ԵՊՀ



ֆակուլտետների և մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների վերաբերյալ: Մի քանի հատորով և սկավառակներով հրատարակվել էին և տարաշվել ուսանողների շրջանում տարբեր մասնագիտությունների դասընթացների տեղեկագրքերն ու կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցերը:

3.6.4 Ուսանողների հարցումները մասնագիտական և բարձրագույն կրթությանն առնչվող տեղեկատվության անհրաժեշտության գնահատման վերաբերյալ փաստեզին պատասխանների հետևյալ բաշխումն ըստ «չատ» և «բավականին» կարևոր գնահատականների գումարային արժեքի.

1. ԲՈՒՅ-ի սոցիալական ծրագրերի մասին /ուսման վարձի զեղչեր, հանգստյան ուղեգրեր և այլն/ - <b>88.3%</b>
2. Արտերկրում սովորելու կարգի և պայմանների մասին – <b>87.2%</b>
3. Աշխատանքի շուկայի /ներքին և արտաքին/ պահանջարկն ըստ մասնագիտությունների – <b>84.3%</b>
4. Տեղեկատվությունը տեղադրվի ինտերնետային կայքում – <b>82.5%</b>
5. Տեղեկատվություն դիպլոմների փոխճանաչման մասին – <b>81.5%</b>
6. Նպատակային կրթական վարկերի մասին – <b>75.2%</b>
7. Տեղեկատվությունը հավաքագրվի, մշակվի և հրապարակվի պետական լիազորված մարմինների կողմից – <b>74.2%</b>
8. Ուսանողների փոխանակման կարգի և պայմանների մասին – <b>71.4%</b>
9. Մասնագիտությունների փոխանակման կարգի և պայմանների մասին – <b>70.7%</b>
10. Ըստ առանձին մասնագիտությունների սովորողների, շրջանավարտների քվաքանակի վերաբերյալ – <b>56.5%</b>

3.6.5 Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, ուսանողներն առավել կարևորում են ֆինանսական օժանդակության և «սոցիալական փաթեթին» վերաբերող տեղեկատվությունը, որը ևս մեկ ապացույց է բուհերի սոցիալական ծրագրերի անհրաժեշտության: Նշանակում է, որ ուսանողներին մտահոգում է իրենց կենսամակարդակի ներկայիս խնդիրների լուծումը նաև բուհի աջակցությամբ:

3.6.6 Գրեթե նույնքան կարևոր են համարում ուսանողները աշխատաշուկայի ըստ մասնագիտությունների պահանջարկի վերաբերյալ տեղեկատվությունը, որն արդեն առնչվում է ապագայում իրենց կենսամակարդակի խնդիրների ինքնուրույն լուծման հնարավորությունների հետ:

3.6.7 Բարձրագույն կրթության վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությանը մեծ տեղ են տվել նաև աշակերտները: Բնական է, որ աշակերտներն ավելի շեշտադրել են այն տեղեկատվության կարևորությունը, որը թույլ կտա նրանց կողմնորոշվելու ուսումը շարունակելու և ԲՈՒՅ ընտրելու մեջ: Այսպես, նրանց «բավականին» և «չատ» կարևոր պատասխանների գումարային արժեքները բաշխվել են հետևյալ կերպ.

1. Ուսանողներին տրամադրվող աջակցության և արտոնությունների վերաբերյալ /ուսման վարձի գեղչ, կրթաթոշակ, անվանական կրթաթոշակ, կրթական վարկեր ստանալուն աջակցություն և այլն/ - <b>67.8%</b>
2. Հատուկ կարիքներով ուսանողների /հաշմանդամների/ համար հարմարեցված, ազատ տեղաշարժի առանձնահատուկ պայմանների վերաբերյալ – <b>66.0%</b>
3. Ընդունելության կարգերի, թեստային առաջադրանքների բովանդակության ու կառուցվածքի վերաբերյալ - <b>64.2%</b>
4. Մասնագիտությունների վերաբերյալ /ցանկը, հավատարմագրված լինելու հանգամանքը և այլն/ - <b>56.5%</b>
5. Շենքային պայմանների, լսարանների, գրադարանների, գործնական և լաբորատոր սենյակների, հանրակացարանի, բուժական, սննդի, սպորտի, հանգստի կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ – <b>55.8%</b>
6. Դասախոսական կազմի վերաբերյալ / կրթական մակարդակը, գիտական, մանկավարժական, հասարակական գործունեությունը, ընտանեկան վիճակը և այլն/ - <b>54.7%</b>
7. Իրենց շրջանավարտների մասնագիտական ձեռքբերումների և աշխատաքի տեղավորման վերաբերյալ – <b>54.1%</b>
8. Տվյալ հաստատությունում կրթությունը շարունակելու, զուգահեռ երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու հնարավորությունների վերաբերյալ – <b>54.1%</b>
9. Իրենց հաստատության վարկանիշի /հեղինակության վերաբերյալ – <b>51.7%</b>
10. Միջազգային կապերի, համագործակցության շրջանակների և ուսանողների փոխանակման ծրագրերի վերաբերյալ – <b>50.1%</b>
11. Լրացուցիչ կրթական և մշակութային ծառայությունների վերաբերյալ, այդ թվում նաև վճարովի – <b>49.0%</b>
12. Անձնակազմին և ուսանողներին տրվող այլ ծառայությունների վերաբերյալ – <b>48.8%</b>
13. Իրենց հաստատությունում ինտեռնետային կապի առկայության և հասանելիության վերաբերյալ – <b>44.9%</b>
14. Գործող կրթական վարկերի համակարգերի վերաբերյալ՝ ըստ առանձին բանկերի – <b>44.9%</b>
13. Տվյալ հաստատությունում գիտական, գիտահետազոտական աշխատանքների, դրանցում ուսանողների մասնակցության հնարավորությունների վերաբերյալ – <b>44.6%</b>
14. Նախորդ տարիների դիմորդների թվաքանակի և անցումային բալերի վերաբերյալ- <b>41.5%</b>

3.6.8 Աղյուսակի տվյալներից երևում է, որ աշակերտներին նույնպես առաջնահերթ հետաքրքրում է ուսման ծախսերի հետ կապված արտոնություններն ու զեղչերը, սոցիալական խնդիրները և միայն 3-4-րդ տեղերում դիմորդին բնորոշ հարցերը՝ ընդունելության քննությունների կարգերը, թեստերի, մասնագիտությունների և այլ հարցերը: Գուցե դա բացատրվում է միասնական քննությունների դպրոց

տեղափոխմամբ, ինչի շնորհիվ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտներն ավելի տեղեկացված դարձան ընդունելության/ավարտական քննությունների էական հարցերում:

- 3.6.9 Ղասախոսներն ու ուսուցիչները բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածման առավել բովանդակալի ձև են համարում նախապատրաստական դասընթացների և հանդիպումների անցկացումը դպրոցներում: Ուսուցիչները նաև նշում են, որ իրենց դպրոցներն անվճար ստանում են ՀՀ ԿԳՆ «Տեղեկատուն» և «Դիմորդ» պարբերաբարականները, որտեղ կցանկանային, որ ավելի նպատակային և ճշգրիտ ինֆորմացիա տեղադրվեր: Նշվեց նաև, որ «Դիմորդը» ցանկալի է հրատարակել մինչև ընդունելության քննությունները, որպեսզի շրջանավարտները հասցնեն ծանոթանալ փոփոխությունների հետ:
- 3.6.10 Այն բուհերը, որոնք ունեն հենակետային դպրոցներ և կից վարժարաններ հնարավորություն ունեն ավելի ծավալուն ու աշակերտների և նրանց ծնողների կողմից պահանջված տեղեկատվություն տրամադրել ապագա դիմորդներին: Բուհերի ղեկավարության և ղասախոսների կարծիքով, մասն դպրոցներում դիմորդներն ավելի ճիշտ են կողմնորոշվում նաև մասնագիտությունների ընտրության հարցում:
- 3.6.11 Ծնողների ֆոկուսագված հարցազրույցը ցույց տվեց, որ եթե 1-ին կուրսի ուսանողների ծնողները առավելապես կարևորել են բուհերի մասնագիտությունների, ուսման վարձի չափերի, ընթացիկ քննությունների կարգի, ուսումնատեսնիկական հագեցվածության մասին տեղեկատվության տրամադրումը, ապա բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողների ծնողներին արդեն ավելի շատ հետաքրքրում են շրջանավարտների դիպլոմների ճանաչողության, հետագա աշխատանքի մասին տվյալները, իսկ մագիստրատուրայում սովորողների ծնողները մեծամասամբ նշել են, որ տեղեկատվության պակաս չունեն:
- 3.6.12 Հետազոտված բանկերի մասնագետները հետաքրքրված են բուհերի ներքին մոնիտորինգային համակարգերի գործառնությամբ, որտեղից իրենք կտեղեկանան դրանց շրջանավարտների աշխատանքի շուկայում տեղավորվելու, ըստ մասնագիտության աշխատելու և միջին եկամուտների մասին:
- 3.6.13 Փորձագետների կարծիքով առանց բուհերում մոնիտորինգային համակարգերի ներդրման հնարավոր չէ գնահատել և ռեյտինգավորել բուհերը:

## Ամփոփումներ և եզրակացություններ

«ԲՈՒՀ-երի առկա վիճակը և կապը ավագ դպրոցի հետ» նախնական հետազոտության արդյունքների վերլուծությունն ու գնահատումն ամփոփված է աշխատանքների տեսնիկական առաջադրանքով ձևակերպված հարցադրումների գծով ստացված հիմնական պատկերի, եզրահանգումների և առաջարկությունների ձևաչափով: Այսպիսով, հետազոտության արդյունքների ամփոփ պատկերն ըստ հարցադրումների հետևյալն է.

**Հարցադրում 1. Ինչ է փոխվել դպրոցում կրթական բարեփոխումների ընթացքում**

Աշակերտների ավելի, քան 70%-ը համաձայնվել է, որ դպրոցում ստեղծվել են նախադրյալներ որակյալ կրթություն ստանալու համար:

**Դպրոցների աշակերտները** թվարկված նախադրյալներից.

**Բարձր են գնահատվել`** 5-բալանոց գնահատման համակարգում միջինը 4-ից 5 բալ`

- Դասերն ավելի հետաքրքիր են անցնում, կա մտքերն ազատ արտահայտելու և քննարկելու հնարավորություններ – 61.2% (պատասխանների)
- Իմ և դասարանցիներիս մոտ ավելացել է սովորելու ձգտումը – 54.5 %
- Դպրոցի ղեկավարությունն ավելի է մտահոգված է աշակերտների առաջադիմությամբ - 54.0 %
- Բարձրացել է ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը – 53.5%

**Ցածր են գնահատվել`** 5-բալանոց գնահատման համակարգում միջինը 1-ից 2 բալ

- Դասագրքերի բովանդակությունն ու որակը – 51.5%
- Դպրոցում կիրառվող գիտելիքների գնահատման 10 բալանի համակարգը – 45.3%
- Լաբորատոր և գործնական պարապմունքների դասասենյակների տեխնիկական հագեցվածությունը – 40.4%

**ԲՈՒՅ-երի 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները**

**Բարձր են գնահատել`**

- Ժամանակակից կահավորումով համակարգչային սենյակի առկայությունը – 50.0% (39.8%)
- Դպրոցում ձեռք բերված լավ գիտելիքը լավ հիմք է բուհում լավ սովորելու համար – 48.1%
- Բարձրացել է ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը – 42.9% (44.7%)

**Ցածր են գնահատել`**

- Դպրոցում ստեղծվել են նախադրյալներ որակյալ կրթության համար – 42.7% (33.1%)
- Ուսման գործընթացն ավելի կողմնորոշված է դեպի ընդունելության քննությունները
- հաջող հանձնելուն – 35.1% (25.2%)
- Դպրոցի ղեկավարությունն ավելի մտահոգված է ուսման առաջադիմությամբ - 34.3%(24.1%)

**Դպրոցի ուսուցիչները** տազնապում են`

- դպրոցում խառնաշփոթ է, դասագրքերն ու ծրագրերը խրթին են, որոշ առարկաների գծով՝ անհամապատասխանություն կա, գնահատման համակարգը անհասկանալի է, թռիչքային դասարանների հարցը լուծված չէ:

**Փորձագետները** գնահատում են՝

- բարեփոխումները ընթացքի մեջ են, ավագ դպրոցը դեռ պետք է կայանա, անհրաժեշտ է հետևողականություն և համակարգված մոտեցում կրթական բարեփոխումների բոլոր բաղադրիչների նկատմամբ:

**Հարցադրում 2. Ինչ սպասելիքներ կան դպրոցական բարեփոխումներից**

Աշակերտների 2/3-ը մեծ հույսեր է կապում հոսքային ուսուցման հետ, ակնկալելով, որ ավագ դպրոցում ճիշտ մասնագիտական կողմնորոշում կստանան, առարկաները կընտրեն ըստ նախասիրության և դրանց գծով ձեռք կբերեն ավելի խորը գիտելիքներ:

**Ղարոցի ուսուցիչներն ու տնօրենները** կարծում են, որ ավագ դպրոցը կտա սպասվող արդյունքները, եթե.

- դպրոցի ընդունելությունը և ուսուցիչների ընտրությունը լինի մրցույթով,
- «հոսքից հոսք» տեղափոխվելը լինի ճկուն (սխալ կողմնորոշվածների համար),
- առարկայական ծրագրերը հագեցված լինեն վարժություններով, թեստերով և տրամաբանական խնդիրներով:

**ԲՈՒՀ-երի դասախոսներն ու ղեկավարությունը** սպասում են ավագ դպրոցի կայացմանը, հույս հայտնելով, որ.

- կստանան մասնագիտորեն կողմնորոշված ու պատրաստված ուսանող,
- ստիպված չեն լինի դպրոցական գիտելիքի բացերը լրացնել արտաժամյա ընդհանուր առարկայական դասերով,
- կխորացնեն մասնագիտական առարկաների դասավանդումն ու կբարձրացնեն մասնագիտական կրթության արդյունավետությունը:

Ուսուցիչները և դասախոսները մտավախություն ունեն, որ առարկայական ուսուցումը կարող է հանգեցնել ավագ դպրոցի շրջանավարտի ընդհանուր զարգացվածության նվազեցմանը, որը հետագայում կդժվարեցնի նրա ուսուցումը ԲՈՒՀ-ում և շարժունությունը աշխատանքի շուկայում:

**Հարցադրում 3. Ովքե՞ր և ինչու՞ են պարտապում մասնավոր կրկնուսույցների մոտ**

Կրկնուսուցումը լուրջ գրավական է ԲՈՒՀ ընդունվելու համար: ԲՈՒՀ-ի ուսանողների 88.8%-ը պարապել է մասնավոր կրկնուսույցի մոտ: Սակայն, ավագ դպրոցի ԲՈՒՀ-ում ուսումը շարունակել ցանկացող աշակերտների արդեն շուրջ 50%-ը չի պարապում կրկնուսույցի մոտ:

**Աշակերտները** վստահ չեն, որ`

- առանց կրկնուսույցի կկարողանան ընդունվել պետական ԲՈՒՀ անվճար հիմունքներով - 51.3%
- առանց կրկնուսույցի կկարողանան ընդունվել ցանկացած ԲՈՒՀ վճարովի հիմունքներով - 30.6%

**Աշակերտները** կրկնուսույցի մոտ պարապելու պատճառներ են նշում.

- ԲՈՒՀ ընդունելության քննությունները պահանջում են լրացուցիչ հմտություններ, որոնք դպրոցում հնարավոր չէ ձեռք բերել – 36.1%
- կրկնուսույցի մոտ պարապելու արդյունավետ է ի հաշիվ անհատական մոտեցման – 35.7%
- դժվարանում են ինքնուրույն պարապել, իսկ կրկնուսույցը ստիպում է ինքնակազմակերպվել – 30.1%

**Աշակերտների ծնողները** հույս են հայտնում, որ.

- ավագ դպրոցը կբարելավի կրթության որակը և կրկնուսույցների մոտ պարապելու անհրաժեշտությունը կպակասի:

**Փորձագետները** ընդհանրացնում են.

- ընդհանուր առմամբ ավագ դպրոցի համակարգի ներդրումը կազդի կրկնուսույցների թվի վրա` մասնավոր կրկնուսույցների թիվը կնվազի, միևնույն ժամանակ, կրկնուսույցների ինստիտուտը շուկայական հարաբերություններում լինելով ավելի ճկուն, կշարունակի կենսունակ մնալ դեռևս երկար ժամանակ.;
- կրկնուսուցումը կդադարի զանգվածային երևույթ լինելուց, եթե ավագ դպրոցը կարողանա ապացուցել հասարակության գոնե անապահով խավին, որ այն ավելի հասանելի և մատչելի ուղի է ԲՈՒՀ ընդունվելու համար:

**Չարցադրում 4. Ինչ է առաջարկվում կրթության որակի ապահովման ուղղությամբ**

Յուրաքանչյուր 5-րդ աշակերտ քիչ է կարևորում ՄՄՈՒՀ կամ ԲՈՒՀ ընդունվելը որպես դպրոցական կրթության որակի գնահատման ցուցանիշ, իսկ ևս 33.2% աշակերտների

դժվարացել է պատասխանել այս հարցին (ամենամեծ տեսակարար կշիռն է բոլոր տեսակի հարցերի «Դժվարանում եմ պատասխանել» մշումների մեջ):

**Աշակերտները** կրթության որակի ապահովման թվարկված նախադրյալներից.

**Շատ են կարևորում`** 5-բալանոց գնահատման համակարգում միջինը 4-ից 5 բալ

- Անանուն հարցումները` դասավանդման որակի վերաբերյալ - 69.0%
- Անանուն հարցումներ` գիտելիքի գնահատման համակարգի արդարության և անաչառության վերաբերյալ – 62.2%
- Անանուն հարցումները` ուսուցիչների մասնագիտական մակարդակի վերաբերյալ – 57.8%
- Քիչ են կարևորում`** 5-բալանոց գնահատման համակարգում միջինը 1-ից 2 բալ
- Ծնողների կողմից կրթության որակը գնահատելը – 37.2%
- Դպրոցական օլիմպիադաներին մասնակցությունը ու մրցանակային տեղեր զբաղեցնելը – 30.2%

Ուսանողների գերակշռող մեծամասնությունը իր ստացած գիտելիքի որակի գնահատումը ցանկանում է ստանալ ԲՈՒՅ-ից դուրս` տեղական կամ գլոբալ աշխատանքի շուկաներում:, և իր կրթության որակի ապահովման հարցում ամենամեծ դերը հատկացնում է դասախոսին:

**Ուսանողները** կրթության որակի ապահովման թվարկված նախադրյալներից.

**Շատ են կարևորում`**

- Շրջանավարտների դիպլոմների լայն ճանաչման ապահովումը - 92.6%
- Դասախոսական անձնակազմի վերապատրաստումը – 91.1%
- Գործատուի /աշխատանքի շուկայի/ որակական գնահատման չափորոշիչները – 81.5%
- Առարկայական գիտելիքների ներսեմեստրային միջանկյալ գնահատման պրակտիկան – 77.8%
- Առարկայական կրեդիտների կուտակման կարգի ներդրումը - 74.6%
- « Զետագոտողի» որակավորման ներդրումը – 68.5%
- Ուսանողների միջբուհական և միջֆակուլտետային տեղաշարժեր – 60.4%

- Գիտելեքների գնահատման նոր՝ «Դիպլոմի հավելածի» համակարգը - 50.0%

**Դասախոսներն ու ուսուցիչները** առաջարկում են.

- դասագրքերը համապատասխանեցնել աշակերտի պահանջներին՝ հաշվի առնելով նրա ընկալունակությունն ու հետաքրքրասիրությունները (աշակերտն ինքնուրույն չի կարող հաղթահարել դասագիրքը)
- առարկայական ծրագրերում ավելացնել գործնական պարապմունքների դերը՝ վարժությունների, խնդիրների, թեստերի, տրամաբանական հարցաշարերի (տեսությունն ավելի լավ են ընկալում վարժությունների միջոցով)
- մտքերի շարադրանքին և խոսքի մշակույթին հատուկ ուշադրություն դարձնել (իրենց իմացածը չեն կարող ներկայացնել, ճիշտ մատուցել)
- բուհերում առարկայական ծրագրերը համահունչ դարձնել՝ միջբուհական շարժունության ապահովման համար
- բարձրացնել ուսանողների պրակտիկայի դերը (գործնական հմտությունները ձեռք են բերում աշխատելիս)
- դասավանդման գործընթացը դեպի գիտելիք «խողովակ» պետք է հանդիսանա («անկախության սերնդին» պետք է ուղղորդել, այլ ոչ թե ասել «ինչ անել»)
- կրթությունը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին(ավագ դպրոցն ու բուհը պետք է սերտորեն համագործակցի գործարարների հետ)

**Չարցադրում 5. Ինչպե՞ս բարձրագնել կրթության մատչելիությունը. կրթական վարկեր**

Այսօր հայաստանյան ֆինասական շուկայում կրթական նպատակով տրամադրվող վարկերը իրականում կարճաժամկետ (3-12 ամիս) սպառողական վարկեր են, տարեկան 22-24% տոկոսադրույքով: Կրթության վարկավորման բնագավառում առաջարկվող ծառայությունները հրապուրիչ չեն վարկառուների համար և հետաքրքիր չեն հենց իրենց՝ բանկերի համար:



**Բանկային փորձագետները**՝ կրթական վարկերի առաջարկի մասին.

- գործող բանկային համակարգն այսօր չունի իրական ուսանողական վարկեր տրամադրելու ձևավորված մշակույթ,
- ուսանողական վարկերի ներդրման գործընթացը անհրաժեշտ է զուգակցել կրթական համակարգի արմատական բարեփոխումների համաչափ զարգացումների հետ,
- աշխատանքի շուկայի, այդ թվում զբաղվածների և գործազուրկների բնութագրիչ ցուցանիշների, աշխատավարձերի, մասնագիտությունների պահանջարկի մասին տեղեկատվությունը պետք է լինի վստահելի և հասանելի,
- պետք է շեշտակիորեն բարձրացվի աշխատանքի շուկայում տարվող քաղաքականության արդյունավետությունը,
- բաց է նաև բանկային ենթակառուցվածքների զարգացման հարցը, առանց որի լուծման և վաղ է խոսել ուսանողական վարկերի մասին:

**Սպառողները**՝ կրթական վարկերի պահանջարկի մասին.

- հարգումների բոլոր մասնակիցները**, որոնց ուղղակիորեն հարց է տրվել. «Կան բանկեր, որ վարկ են տալիս բուհերի սովորողներին, տեղյակ եք արդյո՞ք դրա մասին», մեծամասամբ պատասխանել են, որ անտեղյակ են,
- ուսանողների** գերակշռող մասը «բավականին» և «չատ» է կարևորել կրթական վարկերը, ըստ որում, ուսանողների 77%-ը գտնում է, որ պետք է վարկավորել կրթության ծախսերը՝ ավարտելուց հետո որոշակի ժամանակահատվածում մարելու պայմանով, իսկ 66.4%-ի կարծիքով վարկավորումը պետք է ուղղվի հետբուհական կրթությանը,
- աշակերտների** 43.1%-ը բոլորովին կամ պակաս կարևոր է համարել կրթական վարկերից օգտվելը որպես ուսման վարձի վճարման միջոց, իսկ ևս 23%-ը՝ դժվարացել է պատասխանել՝ իրավիճակին չտիրապետելու պատճառով,
- ուսանողների ծնողների** 67.3%-ը չէր օգտվի կամ ավելի շուտ չէր օգտվի կրթական վարկերից, նրանց 84.6%-ն անընդունելի է համարում մինչև 2 տարի ժամկետով կրթական վարկի տրամադրումը,
- ուսանողների ծնողները** գտնում են, որ կրթական վարկերը պետք է լինեն.
  - 2-ից 5 տարի ժամկետով – 44.2% (պատասխանների),
  - 5-ից 10 տարի ժամկետով – 25.0%,

- ավելի քան 10 տարի ժամկետով – 15.4%,

✚ ուսանողների ծնողներն առաջարկում են հետևյալ մատչելի պայմանները.

- տարեկան մինչև 3% տոկոսադրույք – 75% (պատասխանների),
- վարկը պետք է ամբողջովին «ծածկի» ուսման վարձավճարը – 53.8%,
- ավելի քան 10 տարի ժամկետով – 15.4%,

Հիմնականում կրթական վարկերից օգտվելու պատրաստականություն ունեն միջին և միջինից բարձր կենսամակարդակ ունեցող ծնողները՝ նրանց շուրջ 15%-ը կվերցնեն վարկ առանց նախապայմանների ու ևս 44-45%-ը կվերցնեն վարկ, եթե պայմանները գրավիչ լինեն:

*Հարցադրում 6. Ինչպիսի՞ն է ներքին որակի ապահովման իրավիճակը ԲՈՒՀ-երում*

Փորձագետների հավաստմամբ ՀՀ բուհերը դեռևս չունեն եվրոպական չափանիշներով որակի ներքին ապահովման ձևավորված լիարժեք համակարգեր: Կրթության որակի ապահովման գործուն և համապարփակ համակարգի ձևավորումը ենթադրում է տևական մի գործընթացի կառուցում, որի շրջանակներում փուլ առ փուլ պետք է մշակվեն և գործարկվեն համակարգի բոլոր հենքային բաղադրիչները:

*Առարկայական ծրագրերի և կրեդիտային համակարգերի վերաբերյալ.*

- դասախոսները այնքան էլ գոհ չեն ծրագրերի որակից, քանի որ նոր չափորոշիչները, որոնք պետք է հիմք ծառայեն առարկայական ծրագրերի կազմման համար դեռ պատրաստ չեն,
- փորձագետները կարծում են, որ առարկայական ծրագրերը պետք է արդիականացվեն առավելապես համապատասխանեցնելով դրանք ուսանողի պահանջներին և աշխատաշուկայի պահանջարկվածությանը,
- ուսանողների 81.5%-ը «շատ» (52.4%) կամ «բավականին» (29.1%) կարևորում է գործատուի որակական գնահատման չափորոշիչների ներառումը առարկայական ծրագրերի մշակման գործընթացում,
- ուսանողների 74.6%-ը «բավականին» և «շատ» կարևորում է կրեդիտային համակարգի դերը ուսանողների «միջազգային» շարժունության ապահովման գործում, իսկ 60.6%-ը կարևորում է կրեդիտային համակարգը միջբուհական և միջֆակուլտետային տեղաշարժերի ապահովման առումով,
- ուսանողները 92.6%-ը «շատ» (46.4%) կամ «բավականին» (16.2%) է կարևորել շրջանավարտների դիպլոմների լայն ճանաչման ապահովման խնդրի լուծումը:

**Ուսանողների գնահատման** վերաբերյալ.

- հարցման բոլոր մասնակիցները ուսանողների գնահատման բարեփոխումների ամենամեծ նվաճումը համարում են ընթացիկ (կամ այսպես կոչված՝ միջանկյալ) քննությունների համակարգը,
- **դասախոսների** նշում են, որ ուսանողների գնահատման հարցում ամենաբարդը օբյեկտիվ չափանիշների ընտրությունն ու դրանց կշիռների որոշումն է, հատկապես կապված կրեդիտների համակարգի ներդրման հետ,
- **դասախոսների** պնդմամբ, ուսանողներն այսօր լուրջ ուսումնասիրում են գնահատման մեթոդները և չափանիշները, պահանջում են գործընթացի թափանցիկություն և համապատասխան մեթոդական նյութերի հասանելիություն,
- **փորձագետների** կարծիքով կրեդիտների հաշվառման հենքի վրա կառուցած նոր գնահատման համակարգը դեռ ձևավորման փուլում է, և փորձի կուտակման կարիք ունեն բուհական համակարգի բոլոր մասնակիցները՝ ղեկավարությունը, դասախոսական կազմը և իրենք՝ ուսանողները:

**Դասախոսական կազմի որակի ապահովման** վերաբերյալ.

- **ուսանողների** 91.1%-ը «շատ» և «բավականին» է կարևորում դասախոսական անձնակազմի վերապատրաստման անհրաժեշտությունը՝ բուհերում ներքին որակի ապահովման արդյունավետության հարցում,
- **դասախոսները** նշում են, որ ուսանողների նոր սերունդն իրենցից պահանջում է ոչ այնքան «սովորեցնելու», որքան «ուղղորդելու», «կողմնորոշելու» ունակություն, գործնական/պրակտիկ գիտելիքներ,
- **բուհերի ղեկավարները** չափազանց կարևորում են ուսանողական հարցումները, նշելով այդ հարցումներում ուսանողների բարձր՝ 70-80% ընդգրկվածության մասին:

**Ուսումնական միջոցների և ուսանողին աջակցության** վերաբերյալ.

- **բուհերի դասախոսներն ու ղեկավարները** առկա վիճակը համարում են դեռ շատ հեռու «տեղեկացված հասարակություն» համարվելու չափանիշից,
- **փորձագետները** նշում են մալ ֆինանսական լուրջ խնդիրները,
- **ուսանողների** գրեթե 98%-ը գտնում է, որ ֆինանսական օժանդակություն պետք է տրամադրվի հատկապես կարիքավոր ընտանիքների երեխաներին,

- ուսանողներին տրամադրվող ֆինանսական օժանդակության ծավալները փորձագետները գնահատում են լիովին անբավարար, քանի որ դրանք տարածվում են շատ քիչ քանակությամբ ուսանողների վրա:

**Տեղեկատվական համակարգերի և հրապարակային տեղեկատվության** վերաբերյալ.

- բոլոր բուհերի ղեկավարները նշում են, որ ռազմավարական ծրագրերում նախատեսված են հստակ քայլեր տեղեկատվական համակարգերի ձևավորման և հասարակությանն ուղղված տեղեկատվության տրամադրման ուղղությամբ,
- ուսանողները մասնագիտական և բարձրագույն կրթությանն առնչվող տեղեկատվության անհրաժեշտության տեսակետից առավել կարևորում են ֆինանսական օժանդակության և «սոցիալական փաթեթին» վերաբերող տեղեկատվությունը,
- գրեթե նույնքան կարևոր են համարում ուսանողները աշխատաշուկայի ըստ մասնագիտությունների պահանջարկի վերաբերյալ տեղեկատվությունը,
- աշակերտներն ավելի շեշտադրել են այն տեղեկատվության կարևորությունը, որը թույլ կտա նրանց կողմնորոշվելու ուսումը շարունակելու և ԲՈՒՀ ընտրելու մեջ. դա է ուսման ծախսերի հետ կապված արտոնությունների ու զեղչերի մասին տեղեկատվությունը,
- ղասախոսներն ու ուսուցիչները բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածման առավել բովանդակալի ձև են համարում նախապատրաստական դասընթացների և հանդիպումների անցկացումը դպրոցներում,
- ծնողներին առավել հետաքրքրում է բուհերի մասնագիտությունների, ուսման վարձի չափերի, ընթացիկ քննությունների կարգի, ուսումնատեխնիկական հագեցվածության մասին տեղեկատվությունը,
- փորձագետները կարևորել են բուհերի ներքին մոնիտորինգային համակարգերի ստեղծումը: